

ԳՐԻԳՐԻ ԳՈՒԶԱՐԵԱՆՆՑ

# ՄԵՂԱՊԱՐՏ ՀՐԷՇՆԵՐ<sup>\*)</sup>

ԳՐԱՄԱ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

„Չար մշակողին,  
Չար սերմանց նորին,  
Չարացն զգտաւդ“:

ԱԵՐԷՆ ԳՈՐԿՈՂԻ



\*) Գրքի թատերական անունը պիտի լինի՝  
„Բանա թէ, հիւանդանոց“:

Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպարան Զովհաննէս Մարտիրոսեանցի

ԿՈՆ. Ս. ՄԱՐԻՊՈՑԻԱՆՆԱ, ՕՐԹ. 74, № 1-2.

1894

ԱԵՐԷՆ

333,361

3/

2004

2004

2003

2004

4489



# ՄԵՂԱՊԱՐՏ ՀՐԷՇՆԵՐ

ԳՐԱՄԱ

Արքիք

333

364

4

ԳՐԻԳՈՐ ԲՈՒԶԱՐԵԱՆՑ

# ՄԵՂԱՊԱՐՏ ՀՐԷՇՆԵՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го сентября 1893 г.



899

„Չար մշակողին,  
Չար սերմանց նորին,  
Չորացն՝ զպտուղ“:  
Ներսէս Զնորհալի:



Թ Ի Փ Լ Ի Զ

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի:

Տիպ. Ի. ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆՉԱ, Օրծ. ԿԱ., № 1—2.

1894



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԻՈՐԳ ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆՑ, արտասահմանում կրթուած  
երիտասարդ:  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆՑ, բժիշկ, մտերիմ ընկեր  
Մեծատունեանցի:  
ԻՍԱՀԱԿ ԻՍՐԱՅԻԼԵԱՆՑ, նոյնպէս բժիշկ, նոցա մտե-  
րիմ ընկերը:  
ՄԱԳԻԱՂԻՆԷ, Յովհաննէսի կինը:  
ԳԱՅԻԱՆԷ ՄԻՆԱՍԵԱՆՑ, մտերիմ ընկերուհի Մագ-  
ղաղինէի:  
ՀՌԻՓՍԻՄԷ, Կիրակոսեանցի տանը աղախին:  
ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՔ

Անցքը պատահում է Տփլիսում:

Առանց հեղինակի համաձայնութեան արգելուած  
ներկայացնել բեմի վրայ:



333-2004

(3723)  
411

ԼՖ 332

# ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Քեմը ներկայացնում է բժիշկ Կիրակոսեանի տան՝ լաւ զար-  
գարուած մի ընդարձակ սենեակը՝ երեք զոնով:

## ՏԵՍԻՒ, ԱՌԱՋԻՆ

ԱՂԱԽԻՆ, «ԵՆԻՆ» Հաստատում է, յետոյ ՄԱԳԳԱԳԻՆԷ

ՄԱԳ. ԻՆչ ես փսփսում, վերջացրու շուտով:  
ԱՂԱԽ. (Ձարձարած:) Այսպէս վաղ դուք արթ-  
նացած... Տկար խօսմ չէք, տիկին: Տարաբաղդաբար  
պարոնն էլ գնաց հիւանդներին այցելելու, ուշ կը  
վերադառնայ:

ՄԱԳ. (Մռն է գլուխը): Լաւ, վերջացրու և դուրս  
գնա:

ԱՂԱԽ. (Մտնուի): Էլի մի բան պատահած կըլինի,  
խիստ է ժանգոտած. երևի վատ երազ է տեսել:

Դուրս է գնում:

ՏԵՍԻՆ Բ

ՄԱԳԻՍՏՐԱՆԻՆԵՆ, ՏԵՍԻՆ, շարունակում է հան գալը:

Ես ինքս ինձ չեմ հասկանում, կարծես իմ մէջ երկու բնութիւն լինի. մինը թէև զգում է որ վատ է վարվում, բայց միւսն ընդհակառակը՝ մղում է դէպի անկարգ արարք: Ահա օրինակ՝ այս րոպէիս սովորականից վաղ եմ վերկացել, որ տեսնուեմ Գէորգի հետ: Այս երկրորդ անգամն է, որ նորա խնդրանք առանձնապէս ժամադիր եմ լինում: Բանը շատ պարզ է. նա սիրահարուած է ինձ վրայ, բայց ես, ես ինքս ի հարկէ նորան չեմ սիրում. ուրեմն ինչ կարիք կար նորան նորից մե- նակ ընդունել և վրդովուած սպասել: Ձէ որ սորանով ես նորա տաքացած երևակացութիւնն աւելի եմ վա- ուում և նորա տկար անձն աւելի տանջում. սակայն պէտք է խոստովանուեմ, որ նորա անպայման սէրն ինձ շողոքորթում է, նորա տանջանքն ինձ հաճելի է:

Մտնում է ողորկելու:

ԱՂԱԽ. Պ. Գէորգն է:

ՄԱԳ. Խնդրիր. ես շուտով կը վերադառնամ:  
Դուրս է գնում:

ԱՂԱԽ. (Դուրս բանուով): Համեցէք:  
Դուրս է գնում:

ՏԵՍԻՆ Գ.

ԳԻՌԳԻ, ՏԵՍԻՆ:

Օ, ինչ շոք է... Ձնացելով, որ բաւականին

վաղ է, բայց կատարեալ ա՛րիւկական շոքեր է ա- նում: Ո՛վ միջոց ունէր, փախաւ ամարանոց, իսկ ես հարկադրուած եմ հօրս հիւանդութեան պատճա- ոով մնալ այս կրակի մէջ. ո՛չ մի կ երպով չի յաջող վում ինձ զուարճալի և ուրախ կեանք անցկացնել, թէև ամեն բան ունիմ. Իսկ երբ մի որևիցէ կնոջ վրայ մի կրակոտ հայեացք եմ պցում և փոխարէնն ստանում հեզնական ժպիտ ու արհամարանք, այն ժամանակ ես պատրաստ եմ կրճել կռածիլներս և ճանգբերիս մէջ լսեղդել ամբողջ մարդկութիւնը... Վեր- ջապէս որոգայթս է ընկնում մի կին, որ ինձ կը տայ զուարճութիւն, իսկ իւր մարդու ճակատը կը զարդարէ եղջիւրներով: (Նայում է Ժամայոյցին): Ուշա- ցաւ. չգան խանդարեն:

Մտնում է Մագիստրանին, չեւ է գոյիս և հրախորտ է նստելու:

ՏԵՍԻՆ Դ.

ԳԻՌԳԻ, ՄԱԳԻՍՏՐԱՆԻՆԵՆ

ԳԻՌԳԻ (հաղում է, այնպէս չափով): Յարգելի տի- կին, խօսք չեմ գտնում յայտնելու ձեզ իմ խորին շնորհակալութիւնս, որ դուք նորից ժամադիր եղաք առանձնանալու. ճշմարիտ, ձեր կարեկցութիւնը և մեծահոգութիւնն անսահման է:

ՄԱԳ. Պ. Գէորգ, դուք որ ամեն օր մեզ հետ էք ճաշին ու ընթրիքին, մարդուցս սիրուած էք եղբօր պէս, ինչպէս մտերիմ ընկեր, ինչ կարիք ունիք ինձ հետ առանձին ժամադրութեան:

ԳԻՌԳԻ. Ի հարկէ, տիկին, ձեզ քաջ յայտնիէ



մեր մտերիմ չարաբերութիւնները Յովհաննէսի հետ  
Հէնց այդ իսկ հանգամանքն ինձ համարձակութիւն  
տուեց նորից ձեզ ցանձրացնել, որովհետև ձեզ պէս  
զգալուն կիներ մեր երկուսիս մէջ պէտք է մեզ աւելի  
սերտ կապէ:

ՄԱԳ. Պ. Գէորգ, ահա տեսնում էք, որ ես չզրացայ,  
ուրեմն իմ կարեկցութիւնն ու չարգանքը պակաս չէ:

ԳԷՈՐԳ. Ո՛հ, տիկին, ձեր բարութեանը չափ  
չկայ: (Ահա է յետը, պահում է համբոյրներ որով) Այո,  
դուք լի էք ազնիւ զգացմունքներով... Ո՛հ, ինչ-  
քան նախանձելի է ձեր ամուսնու վիճակը:

ՄԱԳ. Այսուամենայնիւ դուք դորանով չբա-  
ցադրեցիք ձեր ժամադիր լինելու պատճառը:

ԳԷՈՐԳ. Երբ բարեհաճեցաք այս երկրորդ ան-  
գամն էլ կատարել իմ աղաչանքը, ուրեմն էլ ինչ  
կարիք կայ բացազրութեան. իմ կողմից մի համեստ  
ցանկութիւն է նորից և նորից տեսնել ձեզ և միայ-  
նակ շնչել այն օդը, որով դուք էք շրջապատուած.  
ձեզ հետ անցկացրած վաչկեանները վեփիւռի նման  
թեթև են, սահում են ելեքտրական հոսանքից  
աւելի արագ... Հաւատացէք, տիկին, ես ոչ թէ նա-  
խատինքի, այլ կարեկցութեան եմ արժանի. Միթէ  
ինձպէս մի թշուառ երիտասարդ իւր կեանքի մէջ  
զուրկ պէտք է լինի գոնէ մի փոքր երջանկութիւն  
ունենալուց, գոնէ երբեմնապէս մի քողարկուած տե-  
սակցութիւն չունենայ ձեզպէս նազելի տիկնոջ հետ:  
Միթէ դուք այնքան բարձր չէք հասարակութեան  
տիմար կարծիքից, որ չվախենաք այս մասին խօ-  
սակցութիւնից:

ՄԱԳ. Այդ ինչ խօսք է, պ. Գէորգ, միթէ

մենք նորա համար ենք ստանում եւրոպական կրթ-  
թութիւն, տարիներով ուսումնասիրում նոցա գրա-  
կանութիւնն ու կեանքը, որ այստեղ ենթարկուենք  
տգէտ ամբոխի կարծիքին:

Ահա էս է վեր կենում:

ԳԷՈՐԳ. Տիկին, շնորհեցէք, ինձ էլի մի քանի  
վաչրկեան... Միթէ դուք չէք տեսնում իմ տան-  
ջանքը. եթէ չկայ համակրութիւն, գոնէ կարեկցու-  
թիւն ունեցէք...

Բահում է յետն ու նորից համբոյրներ որով և վերադառնո՞ւ  
ընկնում է անարարի վրայ:

ՄԱԳ. (Ձեռք բռնելով նորս գլխին) Ո՛հ, ինչքան  
ջղաչին և հեշտագրգիւ էք... Հանդստացէք, ա-  
ղաչում եմ:

Դուք է գնում է գուռն ամբոյ յեք անում:

ՏԵՍԻՍ

ԳԷՈՐԳ, որից վեր կենում:

Վերջապէս... Ահա լրումն ամենայնի—fēni-  
ta ala comedia. դերի դժուար մասն անց կա-  
ցանք. վերջիվերջոյ բարձր փիլիսոփայութիւնից հա-  
սանք սէր խօսքին. այսուհետև յարմար ժամանակին  
կըհողովենք. «ես սիրում եմ, դու սիրում ես, նա  
(Մորտէ) չէ սիրում»: Այսպիսով այդ քաղցր բառի  
վերջաւորութիւնը երեք ձև փոխելով կ'ունենանք  
հիմք, որով շատ շուտով կըհասնենք յաղթութեան  
և զուարճութեան... Ինչպէս լաւ էի խօսում. իմ  
ասածներին իմ սիրտն էլ շարժուեց. զարմանալի կր-

կոտ և կոկոն էին հնչում բառերը... Կեցցես դու,  
Գէորգ, կեցցես... Հա, հա, հա... (Մի՛թ էս էս) Բայց  
ինչպէս յիմար լուսօք է սէր բառը... Մի՛թ էս կա-  
րող եմ ո՛ւմ և իցէ սիրել. ես միայն ցանկանում եմ  
և տուփում... Ես միայն ձգտում եմ տիրապետել զորս  
գողտրիկ մարմնին: Ես սիրում եմ ամենքին, ինչպէս  
քաղցած գաչը սիրում է բոլոր գառներին, և որին  
բռնում է նա ամբողջ հօտից՝ ի հարկէ այն ժամանակ,  
նորա համար աւելի թանգ է և սիրելի հէնց իւր  
ճանգերի մէջ ընկած արիւնկուայ գառնուկը, քան  
թէ ամբողջ հօտը, որ ազատ է իւր սիրուց:

Գրե՛լ է Բարչեցւո՛ւմ, մտնո՛ւմ է Մա՛գրաղի՛նէն:

ՏԵՍԻՆ 2

ՄԱԳ. ԴԱՂԱՆԷ, ԳԵՈՐԳ

ՄԱԳ. (Զարմանով նայում է, մէկուսի) Մի՛թ է ինձ  
վրայ է ծիծաղում: (Բարչե) Ի՞նչի վրայ էք այդպէս  
ծիծաղում:

ԳԵՈՐԳ. Տիկին, ձեզ յայտնի է, թէ ինչպէս  
ջղաչին եմ և զգայուն: Այս միայն երևոյթ է, թէ  
որքան սաստիկ ցնցուեցաւ իմ ամբողջ մարմինը նախ-  
ընթաց բացատրութիւնից ..

ՄԱԳ. Իսկոյն ձեզ համար սուրճ կըբերեն...  
(Լուռ-բեռն) Հանգստացա՛ք:

ԳԵՈՐԳ. Ես իմ հանգստութիւնս կորցրի այն  
օրից, երբ մօտիկ ճանաչեցի ձեզ, նազելի տիկին:  
Մա՛գրաղի՛նէն յե՛տով նշո՛ւմ է անո՛ւմ որ լա՛ի. աղախի՛նը Էբրո՛ւմ  
է սուրճ:

ԱՂԱԽ. Տիկին Գայիանէն գալիս է:

ՄԱԳ. Չատ լաւ, խնդրելի: Պ. Գէորգ, վեր-  
ջին ժամանակներս արդեօք չէ՞ք հետաքրքրվում գեր-  
մանական կեանքով...  
Մտնո՛ւմ է Գայիանէն, յե՛տ է որչի Գէորգին և համբուրում  
սուրբի՛նը հեք:

ՏԵՍԻՆ Է

ՆՐԱՆՔ, ԳԱՅԻԱՆԷ

ՄԱԳ. (Շարունակելով) Հա, ինչ դրուծեան են  
սօցիալ-դեմոկրատները... Ո՛ւր մնացին Լիբկնէլստի  
և Ռէբէլի ձգտումները... Ի՞նչ են անում անիշ-  
խանականներն ու Յիւրիխի յեղափոխականները...  
Ահա այսպէս անթիւ հետաքրքրական հարցեր  
կան, որոնց վերջն ինչ ընթացք ունենալը, տա-  
րաբաղաբար, ինձ յայտնի չէ: Ախ, Եւրոպա,  
Եւրոպա... Ո՛րքան ես սիրում եմ նորա լուսաւո-  
րութիւնը, ազատութիւնը, մաքրութիւնը, բոլորը,  
բոլորը... Ո՛հ, նա ինձ անսահման յափշտակում  
է և կանչում... (Լուռ-բեռն. Գայիանէն) Այս ո՛ւր ես Գա-  
չիանէ. մոռացել ես ինձ, էլ չես երևում:

ԳԱՅԻԱՆԷ. Տան հոգսերը բոլոր ժամանակս լը-  
լում են:

Աղախի՛նը մտնո՛ւմ է և սուրբի՛նը այնչի՛ն իմաց բան է սուրճ:

ՄԱԳ. Ի՞նչ վնաս, ճաշի սեղանի վրայ զցիր  
երէկուայ ձերմակեղէնը:

ԱՂԱԽ. Նրանք շատ են կեղտոտ, իսկ լուացա-  
րարը գեռ չի բերել մաքուր ձերմակեղէնը...

ՄԱԳ. Ա՛խ, հազար անգամ քեզ ասել եմ գլուխս մի տանիք: Ի՛նչ ուզում ես արա՞... Մի՞թէ դորա վրայ էլ ես մտածեմ... (Առաջինը դուրս է գնում):  
Օ՛, ի՛նչ քան ձանձրալի է տնտեսութիւնը, խոհանոցը, հաշուապահութիւն, հաւաքել-վերքողելը և այլն, և այլն: Տգէտներն այդ բաներն անելով, իրանց ընտանեկան սուրբ պարտականութիւնը կատարած են համարում:

ԳԻՈՐԳ. Այո՛, ընտանեկան ձանձրալի մասը թողնուած է կանանց՝ թէ հօրանց և թէ մարդու տանը:  
ՄԱԳ. Ես շատ վաղ պահի, որ կնոջ ասպարէզը խիստ նեղ է և ընտանեկան կեանքը մանր ու տաղտկալի կտորտանքներից բաղկացած:

ԳԻՈՐԳ. Մանաւանդ ինձ համար շատ ծիծաղելի է, որ մարդիկ (Ուսուցիչ երեւում է դռներում: Գեորգից անհամբեր ձեռով նշան է անում փնջիներին, որ լուս ճանն): հաւաքուելով մի ինչ որ եկեղեցում, մի աղջկայ ու տղայի մի բաժակից գինի խմացնելով ասում են՝ դուք պսակով կասուած էք չաւիտեան, պէտք է ընտանիք կազմէք: Մինչդեռ մարդիկ փոխանակ ազատ լինելու իրանց սիրոյ ընտրութեան մէջ, ստիպուած պէտք է տանջուեն և մեռնեն հնացած ձէսի բռնաբարութեան տակ:

ՏԵՍԻՆ Ը

ՆՐԱՆՔ, ԻՍԱՀԱԿ

ԻՍԱՀԱԿ. (Առջ քաշով ձեռք է բռնում) Հա՛, հա՛ խա՞... (Միժողում է) Դու դարձեալ քեզ համար լսա՞

րան ես գտել, բարձրացել ամբիոն ու՞ զարգացնում ես քնքուշ և դիւրաթեք կանանց սեռը... Պարտաճանաչ կանայք և մայրերես պատրաստում... (Հեղինակը) Երջանիկ մարդկութիւն, երջանիկ ազգ և աւելի երջանիկ սպագայ սերունդ...

ԳԻՈՐԳ. (Բարկայած) Ջարգացնում եմ և կրգարգացնեմ: Ազատ գաղափարներ տարածելն ամեն մի օրինաւոր մարդու պարտականութիւնն է: Ի՛նչ է, սրտիդ դիպչում է. ի հարկէ ուրախ չես, որ կինդ քո ստրկութիւնից ազատ կըլինի:

ԳԱՅ. Ամենաազատ կերպով եկեղեցում հարցնում են նշանուածներից նոցա համաձայնութիւնը նախ քան պսակելը. իսկ ինձպէս մարդատէր կնոջ համար, նոյնպէս և մի օրիորդի, ձեր քարոզած ազատութիւնը կատարեալ անառակութիւն է: Դուք կամենում էք բոլոր կանանց մէջ սիգածեմ պտտել, ինչպէս աքաղաղը հաւերի մէջ, և շատ անգամ էլ ձեր ապօրինի երեխան գրկած:

ԳԻՈՐԳ. Տիկին, խնդրեմ հասկացէք իմ ասածներս. աղջիկը իւր հօր տանը, կինը իւր մարդու մօտ իրաւունք ունին վայելելու ինչպէս նոցա խնամակալութիւնը, նոյնպէս և կեանքի չարմարութիւնները: Իսկ այսպէս թէ այնպէս եթէ կինը մայրանում է, այն, այն ժամանակ հասարակութեան պարտականութիւնն է, ինչպէս իտալացիք են անուանում, այդ սիրոյ զաւակի մասին հոգալ, որ պարգևել է ազատամիտ կինը: Իսկ ինչ կրվեաբերի ձեր օրինակին աքաղաղի մասին, այն, ես զերադասում եմ այդպիսի չարաբերութիւնները՝ ամբողջ մահմեդական արեւելքի պէս քան թէ տատրակների զուգակցութիւնը:

333-2004  
899  
[3723/1162]



**ԻՍԱՀԱԿ.** Ա՛յ քեզ ծակ փիլիսոփայութիւններ հերքելով պսակը և ընտանեկան կեանքը, դու կատարեալ անառակութիւն ես քարոզում... Անտեղի գործածած խօսքերի տակ ազատ սէր, ազատ ընտրութիւն... Ամենքի վրայ դնելով ծանր պարտականութիւններ, ինքդ էլ անգործ չես մնում. դու պատրաստ ես աքաղաղի դեր կատարել քո ազատամիտ կանանց մէջ: Այդպիսի մի երևոյթ քեզ պէս զարգացած մարդու մէջ կատարեալ անասնական ձգտումներ են:

**ԳԱՅ.** Երևում է թէ ինչպէս էք դուք չարգում ձեր ազատամիտ կանանց և ինչպէս էք հասկանում ազատութիւն ասած բանը... Ձեր այդ քարոզները պահեցէք ձեր ընտանիքի համար:

*Մոռում է Յովհաննէսը:*

*ՏԵՍԻՆ Թ*

**ՆՐԱՆՔ, ՅՈՎՀԱՆՆԷՍ**

**ՅՈՎՀ.** (Ձեռք է առնել հեռախօսի և դիմում է նրան): Արդէն շուտով ճաշի ժամանակ կըլինի և դեռ ոչինչ պատրաստութիւն չկայ սեղանատանը: Սեղանի վրայի ճերմակեղէնն էլ այնքան կեղտոտ են, որ վերջին գինետանը ևս չէք տեսնի... Ո՛ւր մնաց այն մաքրութիւնը, որից Եւրոպայում դու չափշտակվում էիր:

**ՄԱԿ.** (Նայելով մարդուն, բարկացած): Ես բոլորովին համաձայն եմ պ. Գէորգի կարծիքին, որ ընտանեկան չարաբերութիւնները շատ ձանձրալի են, որովհետև հաւասարութիւն չկայ: Թէ հայրը և թէ ամուսինը՝ իբր թէ իրաւունքի վրայ հիմնուած կա-

տարեալ բռնակալ են, իսկ կինը միայն կրաւորական դեր է կատարում, որովհետև տարաբաղդաբար ինքնուրոյն գործ չունի, մարդիկ են նորան կերակրում:

**ԳԷՈՐԳ.** Տիկին, ձեր խօսքերը լոյսի պէս պարզ են. Օրինակ՝ իմ հայրը. նա զարհուրելի բռնակալ է այս բառի լայն մտքով. նահատակեց իւր ընտանիքը, մինչ ամենքն էլ մտան գերեզման. ո՛չ մի բանի մէջ նորա համար չափ ու սահման չկայ, իւր կայքը և հօր կայքը վատնեց ամենավատթար կերպով: Այժմ ծերացած ու նեղուած, հիւանդ անկողնի մէջ, դարձեալ վատնում է վերջին ունեցածը... Ձե՛ք որ նորա շառաւիղն ու ժառանգն եմ ես, պէտք է սպասեմ, մինչև նորա բազմամեղ դիակը մտնի գերեզման:

**ԳԱՅ.** (Մէջոտի): Ա՛յ կտրուի քեզ պէս ժառանգն էլ ու շառաւիղն էլ...

**ԻՍԱՀ.** Քո իսկ նկարագրելով դու շատ նման ես հօրդ. կատարեալ նորա քթիցն ես վայր ընկած. Ես փսոսում եմ, որ նա քեզ քիչ է խրատել (Բռնացող ցոյց առնել): Ինչպէս իւր ընտանիքի միւս անդամներին: Միայն թէ հայրդ կըզրկուէր քեզ պէս սիրելի ժառանգից, այն ժամանակ բացի նորա գերեզմանից ո՞վ պէտք է սպասէր նորա մահուան:

**ՅՈՎՀ.** Ցաւալի բան է երբ մարդիկ պարապութիւնից սկսում ես համաշխարհային հարցերի մասին աջ ու ձախ դատողութիւններ տալ՝ առանց մտածելու ու հասկանալու: Եթէ ձանձրանում էք ձեր հօր կամ ամուսնու աշխատանքով ապրել, դուք էլ աշխատեցէք... Սրբութեամբ կատարեցէք ձեր ընտանեկան պարտականութիւնները, սրբեցէք քրտինքը նոցա ճակատից, թեթեւացէք այն ծանր բեռը, որ

դրուած է ձեր աշխատաւորների վրայ. գէթ երբեմն մոռացէք ձեր «ես»-ը, կոշտ ինքնամոլութիւններն ու վստթար ձգտումները: Եթէ ձեզ համար ծանր է պատրաստի հացն ուտելը, ո՛հ, հապա լինչքան ծանր է նորա համար, ով աշխատում ու բերում է իւր արդար քրտինքով վաստակած այդ մի կտոր հացը...

**ԻՍԱՆ.** Դուք սաստիկ մեծ պահանջմունքներով էք աշխարհք եկել, տիկին.—ամեն բան ձեզ համար և ոչինչ ձեզանից:

**ՄԱԳ.** Իմ աշխարհք գալուս համար ես չեմ մեղաւոր այլ...

**ՅՈՎԱ.** (Խօսք չորեւրէ) Դիցուք թէ այդպէս է ինչպէս որ մազն ու եզունգը մարմնի գարգացման հետեւանք են, որոնց կտրում են և դէն գցում, երբ նոքա աւելանում են... Միթէ ձեզ հետ ևս նոյն կերպ պէտք է վարուել:

**ՄԱԳ.** Թո՛ղ մեզ ոչնչացնէին, ո՞վ էր նոցանից կեանք խնդրողը: Մենք նոցա խաղալիքի հետեւանքն ենք և աւելի ոչինչ:

**ԻՍԱՆ.** Այդ ինչ լեզուով էք խօսում, տիկին. սիրել իւր սերունդը յատուկ է նոյն իսկ գազաններին, գոնէ գորանից էլ է մի ք գրկիլ ձեր ծնողներին... Միայն իբրև բացառութիւն, երբեմն կատարի խոզերն ուտում են իրանց գոճիներին, բայց այդ ի հարկէ հիւանդութիւն է:

**ԳԵՈՐԳ.** Դուք շատ խորն էք նայում գործին. Ես իմ տեսակէտն ունիմ: Ահա ես կանգնած եմ ձեր առաջ որպէս կենդանի օրինակ. այն բնութիւնը, որին դուք խնկարկում էք, ինձ աշխարհ է բերել. ես մարդ եմ կենդանի, ես ունիմ նոյնպէս իրաւունք

ապրելու, ուտելու, դուարձանալու և այլն, սակայն ինձ արգելք են լինում. լինին այդ արգելողները օտար թէ իմոնքը, ես հարկադրուած եմ նոցա հեռացնել իմ ճանապարհից: Դուք կ'ասէք նոքա ծնող են եղել, ինձ վրայ հոգացել են. այո՛, բայց նոքա արել են այն, ինչ որ նոցա ծնողները նոցա համար, հետեւապէս նոքա վճարել են իրանց հին պարտքը:

**ԳԱՅ.** Ուրեմն ո՞վ որ ձեր կոշտ եսամոլութեանն արգելք լինի, դուք նորան կրհեռացնէք ինչ միջոցով էլ կարողանաք:

**ԻՍԱՆ.** Զատ պարզ է. դա ամենքին ասում է՝ հեռացէք իմ ճանապարհից, ո՛ւմ համար թանկ է իւր կեանքը. մինչև անգամ իւր հօրը, թէև նա այնքան անբաղաւաճարի է, որ մինչև այժմ զլացաւ յանձնել սորան ժառանգութիւնը:

**ՅՈՎԱ.** Դու կարծում ես այս աշխարհն անտէր է, հրաւիրել են քեզ տիրելու: Կարծում ես այստեղ հարսանիք է, դու միայն պէտք է ուտես, իմես ու քէֆ անես: Ամենեւին ո՛չ, որքան մարդս զարգացած է, այնքան մեծ է նորա նպատաւորութիւնները: Քո մեծ պահանջմունքների համեմատ, դու ինքդ պէտք է ցոյց տաս տոկունութիւն և արդիւնաբերութիւն:

**ԳԵՈՐԳ.** Մենք աւելի շատ ենք բերել և տալիս ենք, քան թէ չետ ստանում. Մենք Եւրոպայի լուսաւորութիւնն ու թարմ մտքերը տոկուն աշխատանքով տարիներով հաւաքել ենք և այժմ տարածում ենք Ասիայի այս մութը խորքում:

**ԻՍԱՆ.** Քեզ ի գուր Եւրոպայից դուրս թողին: Բերլինի գեղեցիկ Կենդանաբանական այգին պէտք է քեզ անպատճառ ձեռք բերէր:

**ՅՈՎՀ.** Այդ լուսաւորութիւնը, որ կարծում էք թէ ընդունել էք Եւրոպայից, այդ ձեր հիւանդ երեւակայութեան պտուղն է. կարելի է մի քանի բան վայրկիւրոյ սովորել էք, բայց տարաբաղդաբար հին և փթած տկճորի մէջ նոր գինի էք ածել. այդ պատճառով համ գինին է վատացել, համ տկճորն է պատուվում: Եւրոպական լուսաւորութեան քողի տակ, որի հետ մենք էլ փոքր ի շատէ ծանօթ ենք, դուք կամենում էք ծածկել ձեր ոչնչութիւնն ու անբարոյականութիւնը: Յուլիոս Կեսարի ժառանգ վատթարացած Ներոնի նման պատրաստ էք ձեր մօր անգանդը ճղել և հայրենիքը կրակել, միայն թէ ձեր գազանական ցանկութիւններին հասնիք և գրաւէք ուրիշների ուշադրութիւնն ու այդպիսով անուն թողնէք... Իրաւ ցաւալի է մեր դրութիւնը, որ մենք գեռես աչնքան խակ ենք և վատթարացած, որ մինչև անգամ եւրոպական պատրաստի լուսաւորութիւնն իսկ անընդունակ ենք ըմբռնելու և կանոնաւոր մարսելու: Ձեզ կարելի է արդարացնել միայն երևելի բանաստեղծ Ջիլլէրի խօսքերովը. «Կեանքը տգիտութեան մէջն է, իսկ մահը՝ գիտութեան» — *Wur das Irrthum ist das Leben, und das Wissen ist der Todt.*»

**ԳԷՈՒԳ.** Դու քարոզում ես մարդասիրութիւն, բայց ես ինքս էլ մարդ եմ, միթէ ես ինքս ինձ չի պիտի սիրեմ:

**ԻՍԱՀ.** Օ՛, այդ մասին դու երբէք պարտազանց չես լինիլ. միայն գիտացիր, ինչ որ դու քեզ ես ցանկանում, նույնը պիտի ցանկանաս ուրիշին:

**ՅՈՎՀ.** Այդ իսկ պահանջում ենք քո անձնա-

կան շահերը, եթէ դու կամենում ես ազնիւ մարդու պէս պարզերես ապրել և ո՛չ թէ գողի պէս ձեռք բերել քո բարօրութիւնը... (Յոգոյ է հոգոյ) է՛հ, ի զուր խօսքեր. «սեւին սապոն ինչ անէ, խեւին խրատը»... Գնանք, գնանք ճաշելու, երևի ուտելու մի բան կըտան: Տիկին Գալիանէ, խնդրեմ:

**ԳՆՅ.** Ջնորհակալ եմ, ես շտապում եմ տուն, ամուսինս, երեխաներս ինձ ճաշի կըսպասեն: Ես մի քանի խօսք ունիմ ասելու Մագդաղինէին:  
*Տղամարդիք չե՛ք ե՛ն քօլի՛ն Գոյիւնէին և գնո՛ւմ սեղանաբան:*

ՏԵՍՆԼ ժ

ՄԱԳԻԱՂԻՆԷ, ԳԱՅԻԱՆԷ

**ՄԱԳ.** (Իրաւունք է նորո՞ւմ քեզ...) Ասա, Գալիանէ ջան, ինչ կայ:

**ԳՆՅ.** Դու գիտես, հոգիս, թէ ես քեզ ինչպէս եմ սիրում: Ներքի որ ես խառնվում եմ քո գործերին: Մեր երեխայական օրերից իրար հետ քրոջ պէս ապրելն ինձ իրաւունք է տալիս քեզ պարզ ասելու, որ քաղաքիս հասարակութիւնը խօսում և պախարակում է քո չարաբերութիւնների մասին պ. Գէորդի հետ, նորա վատ ներգործութեան մասին քեզ վրայ, ինչպէս ես ինքս էլ այսօր համոզուեցի: Պարզ նկատելի էր, որ այսօր էլ ինչ անում էր և խօսում, բոլորը քեզ համար էր: Արթնացիր, քանի ուշ չէ և զգո՛յշ եղիր... Դու ի հարկէ միամտաբար խաղ ես անում այդ գազանի հետ, բայց դա իւր ատելի ճիրանների մէջ քեզ կըխեղդէ:

ՄԱԳ. Այդ բոլորը լոկ զրպարտութիւն է... Այստեղ ինչ հասարակութիւն կայ, որ ինչ կարծիք ունենայ. ես թքել եմ բոլորի վրայ:

ԳԱՅ. Աւելի լաւ, որ զրպարտութիւն է. ուրեմն հեռու պահիր քեզ այդ լուսաւորեալ գազանից. այս խնդրի վրայ թեթեւամտութիւնով մի նայիր: Ի գուր ես արհամարհում հասարակութեան կարծիքը: Նորա բերանը շատ մեծ է և լեզուն երկար. նորա հետ պէտք է շատ զգոյշ լինել: Քո թքիցը ամեն մէկին ոչինչ չի ընկնիլ. բաց եթէ ամենքն էլ շուռ դան և քեզ վրայ թքեն, այն ժամանակ այլևս մաքրելն անկարելի կըլինի: Ազաչում եմ քեզ, պահպանիր թէ քո և թէ ամուսնուդ բարձր պատիւը:

ՄԱԳ. Գիտացիր, որ ես իմ գործերիս համար ոչ ոքին հաշիւ տալու միտք չունիմ. մանաւանդ քեզ (Մայրս է որ համահանգում է) որ կտրած գդալի նման մէջ ես ընկնում անտեղ, ուր քեզ ոչ ոք բան չի հարցնում... Եւ ինչ էլ քո խելքի ու հասկացողութեան բան է:

ԳԱՅ. (Վէր է փնտռում) Պարզ է որ դու ևս միևնոյն ցեխից ես շինուած, ինչից որ շինուած է քո իմաստակ հերոսը: Դուք երկուսդ էլ բարեկամութիւն ու կարեկցութիւն ասած բանը չէք հասկանում. իսկ դու կարծում ես թէ մեծ բան ես դարձել, որ մի քանի տարի Գերմանիայում հոտած խոզի միս ես կերել և միքանի մարդկանց անուն ես սովորել... (Տեսող անելով) Լիբկնէխտ, Իէբէլ... (Յաւանդաբար) Դու աւելի վատ վերադարձար, քան թէ զնացիր: Ես զնում եմ, այլևս ինձ չես տեսնիլ: Սակայն իմացած եղիր, որ շուտով վնչ կըտաս այդ քո չիմար գլխին:

Դուք է փնտռում

ՏԵՍՈՒՆ ԺԱ

ՄԱԳԻՒԱՂԻՆԷ, ՏԵՍՈՒՆ:

Այ քեզ տրաքոց, Մի հարցնող լինի, թէ քեզ ինչ, քո ինչ բանն է... Կնիկ ես, քո կեղտոտ լուացքը մաքուր պահիր: Չէ, պէտք է իւր ատելի ունեւն ուրիշների գործերի մէջ կոխէ, որ ինչ է իմանան թէ ինքն էլ մի բան է: Այդ բոլորը նախանձից է... Որովհետեւ ոչ ոք ուշք չի դարձնում նորա վրայ, նա էլ բարոյականութիւն է քարոզում... Ահա թէ ինչո՞ւ չեմ սիրում կանանց հասարակութիւնը. նոքա խարդախ են, նախանձոտ, բանբասող, չարակամ, չարալեզու, չարաճճի...

Որք փնտռում է խոզն ու գորտ վաղած սեղանաբանն:

ՎԱՐՍԳՈՅՐ

# ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն սենեակը:

ՏԵՍԻՂ ԱՌԱՋԻՆ

ՄԱԳԻՒՂԻՆԷ, ՏԵՆՈ՜, ԸԲՆՆՆ ԳՐԱԾ ԳՆՀԱՆՈՒՄԻ ԿՐՈՅ:

Ո՛հ, ինչքան ձանձրալի է այստեղի կեանքը, թէև կէս տարի դեռ չկայ որ թողել եմ Եւրոպան... Ոչինչ բան ինձ չէ կապում այս երկրի հետ... Ծնողներս, եղբայրներս ու քույրերս հեռու են ինձանից, և ճշմարիտ լաւն էլ հէնց այդ է. նոցանից բացի անհանգստութիւնից ու անբաւականութիւնից ուրիշ օգուտ չէր լինելու. մանաւանդ հայրս, որ սաստիկ ջղալին է, զգայուն և շատ հեշտագրգիւ: Այստեղի ազգականներս էլ միայն խրատներ կարդալ գիտեն: Ամուսինս յափշտակուած իւր հիւանդներով, ուրիշ ոչնչով չէ հեռաբերվում և չի տեսնում, թէ իւր մեծ քթի տակն ինչ է անց կենում... (Միժողով է:) Միակ մարդը, որ արթնացնում է ինձ թմրութիւնից, Գէորգն է: Ո՛հ,



ինչքան կիրք, ինչքան կրակ, որքան սէր ու խելք...  
Ահա՛ ճշմարիտ հանճար, ահա՛ կատարեալ հասարակական գործիչ: (Ռոստոմ Բեռնի) Երևի Գէորգն է՝  
Խնդրեմ:

Մոնոս է Գէորգը:

ՏԵՍԻՆԷ

ԳԷՈՐԳ, ՄԱԳԻՍՏՐԱՆԷ

ԳԷՈՐԳ. Բարի լոյս, նազելի տիկին: Այսօր թէ  
և վաղ է, բայց համբերութիւն չունեցայ, շտապեցի  
ձեզ հետ տեսնուել ու խօսել քանի դեռ ոչ ոք չի  
խանգարիլ:

ՄԱԳ. Խնդրեմ, նստեցէք, շատ ուրախ եմ  
ձեզ տեսնելու: Ի՞նչ նորութիւն կայ, խնդրեմ հա-  
ղորդէք: Մանաւանդ այսօր ինձ պատել է մի անբա-  
ցատրելի տխրութիւն. այս անիծած երկրում կատա-  
րեալ մեռելութիւն է:

ԳԷՈՐԳ. Այո՛, տիկին, ձանձրալի են այստեղի  
հանգամանքները: Ոչինչ բան չէ թարմացնում մեր  
ոչժն ու կեանքը: Գործ տեսնել այս երկրում անկա-  
րելի է, իսկ եղած գործերի մէջն էլ կեանք չկայ-  
գոնէ այժմ յոյս կայ որ ես շուտով կըփախչեմ այս-  
տեղից, նորից կըփութամ Եւրոպա:

ՄԱԳ. Միթէ... Երևի հաշտուել էք ձեր հօր  
հետ, որ նա իւր քսակը բաց է անում:

ԳԷՈՐԳ. Ո՛չ, տիկին, նա այն մարդը չէ, որ  
քսակը բաց անէ, այն էլ ինձ համար. նա հարկա-  
դրուած է իւր ամբողջ քսակը տալ ինձ:

Միժողո՞ւմ է:

ՄԱԳ. Պ. Գէորգ, ինդրեմ պարզ խօսէք,  
հանելուկների ժամանակը չէ:

ԳԷՈՐԳ. Տիկին, ասածս ոչ թէ հանելուկ է,  
այլ վերջապէս պարզ իրողութիւն է: Հօրս հիւանդու-  
թիւնը սաստկացաւ, նա անյոյս դրութեան մէջ է և  
ամեն մի վայրկեան սպասելի է նորա մահը:

ՄԱԳ. Ո՛հ, այդ, ճշմարիտ որ, մեծ և փառա-  
ւոր լուր է ձեզ համար: Վերջապէս դուք կըլի-  
նիք հարուստ, անկախ և ազատ... Իրաւ որ այդ ան-  
պայման երջանկութիւն է:

ԳԷՈՐԳ. Ահա՛ շուտով ձեր ամուսինը կըգայ  
հօրս մօտից, տեսնենք ինչ մխիթարական լուր կըբե-  
րէ: Երբ ես մտածում եմ իմ ապագայ անելիքներին  
վրայ, սիրտս բաբախում է, շունչս կտրվում և գլուխս  
պտոյտ գալի. վերջապէս կատարեալ ազատութիւն  
իմ ցանկութիւններին...

ՄԱԳ. Այո՛, երջանիկ էք դուք. կըփութաք  
Եւրոպա, կ'ապրէք ձեր ճաշակի և ցանկութեան հա-  
մեմատ, ազատ, մի կնոջ հետ բազուկ բազկի տուած,  
որին դուք սիրում էք ինչպէս սիրահար, կամ թէ  
օրէնքի տակ ինչպէս նորապսակներ: Նա ի հարկէ  
ձեզ սիրում է և ուրախ ու զուարթ պտտում է  
ձեզ հետ ամբողջ Եւրոպան. էլ մի անկիւն չէք թող-  
նում որ չայցելէք և ի հարկէ ամեն տեղ անվերջ  
սէր և երջանկութիւն... (Ռոստոմ Բեռնի) Այն ինչ ձեր բա-  
րեկամներից մինը, որ ձեզ ի բոլոր սրտէ համակրում  
է, անմխիթար պիտի մաշուի ու տանջուի այս  
պիղծ ասիական գբի մէջ:

ԳԷՈՐԳ (Մեռնի): Օհօ, սա ինձանից առաջ է  
ուզում է ձանապարհ ընկնել: (Բարջ): Այո՛, վերջապէս

ինձ վիճակվում է փառաւոր ապագայ. հարստութիւնը, անկախութիւնն ու բուռն ցանկութիւնը կը տան ինձ անվերջ զուարճութիւն և բաւականութիւն: Այժմ կարող եմ ճաղրել թշուառ մարդկութիւնը, որ գերի է ամենքին իւր տգիտութիւնով և ոսկէպաշտութիւնով: Ես ունիմ գիտութիւն, կ'ունենամ և փող:

Ուշադրութեամբ նայում են միմեանց:

ՄԱԳ. (Մէլուսի:) Թէև միտքս հասկացաւ, բայց համեստութիւնից և քաղաքավարութիւնից ստիպուած չպատասխանեց:

ԳԵՈՐԳ. (Մէլուսի:) Գնալուց առաջ պէտք է ճաշակել այս կարծիքաւոր թարմութեան պտուղը:

Մանուհի և Յովհաննէսը, Գեորգը և Մագդաղինէն գեղեցիկ

վեր են ընչում:

### ՏԵՍԻԼ Գ

#### ՆՐԱՆՔ, ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԳԵՈՐԳ. (Գիմելով Յովհաննէսին:) Ասա՛ շուտ, ինչպէս է հիւանդը... Առողջանալու յոյս կ'այն արդեօք:

ՅՈՎՀ. Մի փոքր համբերութիւն... (Նայում է): Ես յոգնած եմ:

ՄԱԳ. Միթէ՛ այնքան յոգնած ես, որ երկու խօսք չես կարող ասել՝ կենդանի է, թէ մեռաւ:

ԳԵՈՐԳ. Աղաչում եմ, ասա՛ միայն՝ երկու խօսք մի՛ տանջիր ինձ... Մի խօսքն էլ բաւական է...

ՅՈՎՀ. Իսկ քո ուզած խօսքն է...

ԳԵՈՐԳ. (Ընդհանրապէս) Ուրեմն մեռաւ:

#### ՅՈՎՀ. Այն:

ԳԵՈՐԳ. (Ձեռք քանակ է դնել սեղոյ և խօսում է չափազանց) Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի է... Նա չէր կարող մեռնիլ: Միթէ՛ այդ ճշմարիտ իրողութիւն է... կատակ չես անում արդեօք, դու ինքդ համոզուեցիր և այնպէս եկար... կարելի է միայն հոգեւարք է... Դու շօշափեցիր՝ նորա երակը, լսեցիր՝ նորա սրտի բաբախումը, նորա շնշառութիւնը, և այդ բոլորը դադարած էր: Նա սաստիկ հեշտագրգիռ և ջղաչին մարդ է, կարելի է լիտարգիքական քուն է մտել... Նորա մահն անկարելի բան է:

Լուսինն:

ՅՈՎՀ. Հանգստացիր, միամիտ եղիր, այդ հաստատ է և ճշմարիտ: Հայրդ վերջացրեց իւր հաշիւն այս աշխարհիս հետ: Այն սիրտը, որ աւելի արագ էր բաբախում, այն կուրծքը, որ աւելի զօրեղ էր լաչնանում քեզ՝ քաղցր ժառանգին գրկելիս, այժմ դադարել են... Գնա՛, շտապիր, ժամանակ մի՛ կորցնիր, այնտեղ կայքը պահպանել է հարկաւոր, չէ՛ որ դու պէտք է ներկայ լինիս, լաւ քո թանկագին կորուստը... (Կծու հեգնութեամբ:) Հարկաւոր կըլինի նաև լրագրներում հրատարակել, որ դու՝ նորա սիրելի որդին սրտի խորին ցաւօք յայտնում ես հօրդ մահը հասարակութեանը, որ շտապեն իրանց կարեկցութիւնով սփոփել քո վիշտը և մխիթարել... քո անսահման տխրութիւնը... Գնա՛, գնա՛:

Գեորգը դուրս է գնում, նրան ճանապարհ է փցում Մագդաղինէն:

ՏԵՍԻՆ Դ

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԳԵՂՈՍ:

Ահա՛ ձեզ չէզոքացող սերունդ... Որպէս թէ եւրոպական կրթութիւն են ստացել: Իրաւ է խօսում են և դատում, բայց հասկացողութիւնները ձախ ու ծուռը: Սոցա մէջ սրբութիւն ասած բանը չկայ—ոչ սէր, ոչ կրօն, ոչ Աստուած... Ամեն մի վայրկեան վրդովեցնում են մարդու և ամօթ բերում հասարակութեան խղճմտանքին... Անբարոյական և անգութ գազաններ, որոնք միայն ծառայում են իրանց կեղտոտ կրքին... Սոքա եթէ անգրագէտ լինէին, աւելի լաւ կըլինէր, գոնէ չէին լարիլ իրանց հիւանդ ուղեղը: Իսկ թէ մարդիկ հարկադրուած են գործ ուրենալ գազանի հետ, աւելի լաւ է որ այդ գազանն անկիրթ լինի, քան թէ կրթուած, գոնէ խորամանկութիւնը պակաս կըլինէր և թերևս անկարող կըլինէր դիմակով ծածկուել:

ՏԵՍԻՆ Ե

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՄԱԳԴԱՆՆԷՍ:

ՄԱԳ. Վերջապէս մենք մենակ ենք, վաղուց է ցանկանում էի քեզ հետ խօսել:

ՅՈՎՀ. Ասա լսենք:

Յոգևոց է տալու:

ՄԱԳ. Ի՞նչ ասեմ, քանի որ շատ անգամ եմ

ասել և կրկնել, բայց դու անուշադիր ես դէպի ինձ և իմ ցանկութիւնը:

ՅՈՎՀ. Ասա, մի ձգձգիր... Ի՞նչ օրական միմեանց հակառակ տասը ցանկութիւններ ես յայտնում, ես խօս չեմ կարող մարգարէանալ, թէ այսօր որի վրայ պիտի խօսենք:

ՄԱԳ. Ա՛յ, դու միշտ այդպէս ես. երբ ուզում եմ մի բան ասել, մի հաստատ, որոշ բանի վրայ կանգ առնել, դու միշտ էլ հեղնական ձև ես ընդունում և աշխատում ես համբերութիւնից հանել ինձ:

ՅՈՎՀ. Իմ խօսակցութիւնը պարզ ու հանգիս է, ի հարկէ որ ես չեմ կարող գիտենալ այն, ինչ որ դու ես ուզում ասել:

Ուղտ է քնու:

ՄԱԳ. Ո՛չ, ոչ, մի փախչիր... Նստի՛ր, ես կամենում եմ ասել այն, ինչ որ շատ անգամ եմ ասել. ես չոգնել եմ պարապ կեանք անցկացնելուց... Ես ցանկանում եմ մի որևէ կենդանի գործ ունենալ...

ՅՈՎՀ. Այդ բոլորը՝ դու ինքդ էլ գիտես որ շատ հին պատմութիւն է. մեր ծանօթանալու հէնց առաջին օրից այդ խօսքերդ լսել եմ, և դու լաւ գիտես, թէ ես ինչպէս էի համակրում... Ինձ գրաւողն էլ հէնց այդ խօսքերդ էին. բայց տարաբաղաբար այդ բոլոր յոյսերը միայն երևակայութիւն էր:

ՄԱԳ. Այդ չես կարող ասել, ես միշտ պարապել եմ:

ՅՈՎՀ. Սակայն ի՛նչպէս. չունենալով տարրական ուսումնարանի գիտութիւն, համալսարաններում դասախօսութիւններ էիր լսում թէ Ռուսաստան և թէ Գերմանիա. օրինակ՝ թուաբանութեան չորս

գործողութեանն անտեղեակ, Ֆիզիքացի դասախօսութիւններ էիր լսում. պատմութիւն չգիտենալով՝ դու չաճախում էիր փիլիսոփայութեան դասերին. մարդուս կազմուածքի վրայ ոչինչ տեղեկութիւն չունեցած, չիմանալով թէ որտեղից է սկսվում վիզը, մէջքը կամ ոտները, դու Ֆիզիոլոգիայով էիր պարապում: Ինչքան ես քեզ ասացի ամեն բանին հիմք է հարկաւոր, դեռ պատրաստուիր և ապա թէ ուսումնասիրիր քեզ չարմար մի առարկայ, որպիսի են մանկական պարտէզը, մանկավարժութիւնը, որոնք Գերմանիայում զարգացած են, բայց ում կ'ասես. ասողին էլ լսող է պէտք:

ՄԱԳ. Ա՛յ, դու միշտ այդպէս ես. հէնց մի բան աշխատում եմ առաջ տանել, դու միայն քո սառնասիրտ խօսքերով, առանց կարեկցութեան և մի գործնական խորհրդի՝ ինչպէս տաք ջրին սառ ջուր ածես, ինձ հովացնում ես ամեն բանից...

ՅՈՎՀ. Ախար հասկացիր ինձ կեանքիդ միջում գէթ մի անգամ. քանի որ քո մէջ չկայ՝ ո՛չ պատրաստութիւն, ո՛չ տոկունութիւն, ո՛չ հաստատ կամք, էլ ինչ կենդանի գործ կարող եմ քեզ տալ: Երբ օրիորդ էիր, շատ համակրութիւն էիր ցոյց տալիս դէպի բժշկականութիւնը, ամեն տեղ հանդիպում էիր ինձ հիւանդի մօտ, գթառատ քրոջ դեր էիր կատարում. բայց պսակուեցանք թէ չէ ամեն կարեկցութիւն, որ ցոյց էիր տալիս դէպի հիւանդները, մեռաւ քո մէջ...

ՄԱԳ. Ես բժշկականութեամբ հետաքրքրվում էի, որովհետեւ քեզ սիրում էի:

ՅՈՎՀ. Ուրեմն պսակուելու օրից սկսած այլևս ինձ չես սիրում:

ՄԱԳ. Ես այդ չասացի:

ՅՈՎՀ. Այդ միևնույն է. բայց եթէ դու հաստատ կամք ունենայիր, պէտք է սիրէիր թոյներին... Աշխարհիս երեսին ո՞վքեր են թոյները—երեխաները, ծերերը, հիւանդները և առհասարակ անօգնականները... Այս լաւ գիտացիր, որ ինչքան գիտութիւն, այնքան էլ փրկութիւն:

ՄԱԳ. Քո խօսքերը լսելիս կարծես թէ մի կրօնամոլ աբեղայի քարոզ լինիմ կարդալիս. հասկացիր, որ ես ո՛չ միայն չեմ ցանկանում հիւանդներին նայել, այլ նոյն իսկ ինձ ատելի է, որ դու ևս բժշկութիւնով ես պարապում, որովհետեւ ինձ հետ ապրելով, դու կարող ես հետզ վարակիչ հիւանդութիւններ բերել տուն և ինձ ևս վարակել կամ անկելացնել և կամ մեռցնել... Ես ո՛չ միայն հիւանդներին, այլ նոյն իսկ առողջներին անգամ ատելովատում եմ...

ՅՈՎՀ. Բայց ի՞նչն է պատճառը, որ դու բժշկականութիւնն այդպէս ատելով՝ տարօրինակ տոկունութեամբ ուսումնասիրում ես թոյներն ու զօրեղ դեղերը:

ՄԱԳ. Այդ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ լուկ հետաքրքրութիւն:

ՅՈՎՀ. Մի՞թէ... Միմիայն հետաքրքրութիւն... և ուրիշ ոչինչ...

ՄԱԳ. Ես պահանջում եմ կենդանի գործ, ազատ պարապմունք...

ՅՈՎՀ. Է՛հ, բաւական է, թողնենք այս խօսակցութիւնը, ի զուր ժամանակ ենք կորցնում:

ՄԱԳ. Ես ամենևին ցանկութիւն չունիմ հարցն առանց վճռելու թողնել:

ՅՈՎՀ. Վերջապէս հասկացիր ընդմիշտ, որ քեզ չարմար ոչ մի պարապմունք չկայ, որովհետեւ քո մէջ որևէ գործի համար պատրաստութիւն չկայ:

ՄԱԳ. Այ, տղամարդիկ միշտ այդպէս էք. բոլոր իրաւունքները խլել էք ու մեզ թողել խոհանոցը, լուացքն ու առտնին տնտեսութիւնը, այսինքն այն, ինչ որ գերիներին է յատուկ:

ՅՈՎՀ. Տէր Աստուած... Թողմի կողմն ընդհանուր հարցերը, դու խօսիր քեզ վրայ. ինչ կարող ես անել, ինչ պատրաստութիւն ունիս կեանքի մէջ մտնելու: Դու սխալվում ես, երբ կարծում ես թէ առտնին տնտեսութեամբ պարապելը ստորութիւն է. ընդհակառակը՝ մարդու գոյութեան համար մաքուր և կարգաւորեալ խոհանոցն ու սպիտակեղէնն այնպէս հարկաւոր են, ինչպէս օդը և ջուրը...:

ՄԱԳ. Ուրեմն քո ասելով, ես պէտք է նստեմ քո խոհանոցում և հաշուեմ քո կոպէկներն ու լուացքը... (Հեփոօհեօ) Երջանիկ ամուսնութիւն...:

ՅՈՎՀ. Այդ խոհանոցն ու լուացքը որքան իմն են, այնքան էլ քոնը: Այսքան տարի է, փառք Աստուծոյ, այդ չես արել, թէ և քո պարտականութիւնն է. բայց հաւատացիր, որ այդ աւելի լաւ կըլինէր մեզ համար, քան թէ գերմանական փիլիսոփայութեան ձախ ու ծուռ հասկանալը... Մի ասա ինձ տեսնեմ, թէ ամեն բան որ մարդիցդ պահանջում ես, այդ բոլորի փոխարէն դու ինքդ ինչ ես տալիս:

ՄԱԳ. Պարզ է, որ մարդու պարտականութիւնն է իւր կնոջն ամեն չարմարութիւն տալ... Եթէ նա

չէր կարող պատուաւոր կերպով պահել իւր ընտանիքը, պէտք է չստակուէր. իսկ եթէ սխալուել է, նա պէտք է ամեն միջոց գործ դնէ, որ իւր կինը նորից ստանայ ամեն կենսական միջոց և երջանկութիւն. կարճ ասած՝ մարդը պէտք է հանէ իւր կնոջից այն սեղմող սանձը, որ պսակի միջոցով հագցրել է խեղճ կնոջը:

ՅՈՎՀ. Ահա թէ ուր հասցրեց մեզ մեր խօսակցութիւնը: Դու պահանջում ես, որ քեզ ազատեմ... Այո, այդ շատ լաւ կըլինէր երկուսիս համար էլ. գոնէ ես այս ևս չոչս չունենալով ընտանեկան չաջող կեանքի, հանգստութիւն կըզտնէի, որ ինձ շատ հարկաւոր է... Ես չոգնել եմ... Սակայն ինչ արած, պսակը քանդել անկարելի է, իսկ մեռցնել ինձ և քեզ ազատել, ես մտադիր չեմ... Սակայն հետաքրքիր է, թէ ինչ պէտք է անես քո ազատութեան հետ:

ՄԱԳ. Ո՛հ, ազատութիւն, այդ իմ ցանկացած բանն է. Երբ այրին սևերը հագած, դէմքը տխրութիւնով պատած ընդունում է սորա և նորա մխիթարական խօսքերը, մինչդեռ իւր հոգու մէջ անչափ ուրախ է, որ վերջապէս ազատուեց պսակի գերութիւնից... Ես հաւատացած եմ, այդ ժամանակ նա ամենաերջանիկ կինն է... (Յոփոօհեօ) Ո՛հ, ինչպէս ես ցանկանում եմ այդպիսի դրութեան մէջ լինել...:

ՅՈՎՀ. (Հեփոօհեօ) Ո՛հ, ինչքան ցաւալի է մի մարդու համար, որ երկար տարիներ սիրելուց, խնամելուց և աշխատելուց յետոյ լսում է այդպիսի խօսքեր իւր կնոջից... այն էլ սիրով միացած կնոջից... Պսակից առաջ սիրահարուած վազում էիր ետևիցս, խոստանալով անվերջ երջանկութիւն,

անգամ աղբատիկ խոճթում, միայն թէ միասին...

ՄԱԳ. Ամեն ասած խօսք որ մարդ կատարէ, այդ ուր կ'երթայ. ի հարկէ դու այդ խօսքերը չէիր լսիլ, եթէ թողնէիր ինձ նորից գնայի Եւրոպա:

ՅՈՎ. (Տեղից վեր կենդանի) Կենդանի գործից հասանք Եւրոպա... Այսուհետև ուր ուզում ես գնա:

Դուրս է գնում:

### ՏԵՍԻԼ 2

ՄԱԳ. ԳԵՂԻՆԷ, ՏԵՆՈՒ, ԿԵՆԸ ԵՒ ԹԻՄՈՒՆ:

Տեսէք թէ ի՜նչ մեծահոգի ամուսին ունիմ. ի՜նչ մեծ բան է տալիս իւր կնոջ— ուր ուզում ես գնա... Այդ ես վաղուց գիտեմ, որ ուր ուզենամ, կարող եմ գնալ անարգելք, բայց միայն այդ բաւական չէ. ինձ հարկաւոր է հարստութիւն և կատարեալ ազատութիւն... (Առաւելում) Հեռացէք ամենքդ իմ ճանապարհից, ում համար թանգ է իւր կեանքը... (Մտքեւորած է անկէսի տեղումն, բայց է տեսնում գլորոցն ու իր արարածը) Կոնոմ ես ուշադրութեամբ լսելուս: Ահա թէ ընդունակ չեմ ես երկար և տոկուն աշխատանքի... Այ՛ թէ ինչպէս սովորեցի դեղատոմս գրել և ձեռքս բոլորովին նմանեցրի մարդուս գրութեան, այնպէս որ դեղատունը իմ դեղատոմսով ամենագորեղ և թունաւոր դեղեր է տալիս... Ահա գիտութիւն, որի մէջն իմ ոյժն ու ազատութիւնը...

ՎԱՐՍԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է մի այգի:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԻՈՐԳ, ՄԱԳ. ԳԵՂԻՆԷ, յետոյ ԱՂԱՒԻՆ:

ԳԻՈՐԳ. Նազելի Մաղլէն... խնդրեմ վերջապէս ինձ իրաւունք տաք ձեզ այսպէս անուանել... Ահա ես ազատ եմ, անձնիշխան և հարուստ: Ես իրաւունք ունիմ գործելու, ասելու ու իմ բուռն ցանկութիւնը յայտնելու... Թուչել դէպի Եւրոպա այժմ ամենահեշտ բանն ինձ համար:

ՄԱԳ. Ուրեմն ձեզ մնում է միայն օգուտ քաղել ձեր նախանձելի դրութիւնից:

ԳԻՈՐԳ. Ո՛չ մի դրութիւն, ո՛չ մի երջանկութիւն, ո՛չ մի հրապոյր ինձ չի կարող բաւականացնել, եթէ դուք ինձ հետ չլինիք:

ՄԱԳ. Բաց ինչպէս կարող եմ ես ձեզ հետ լինել, երբ ես ազատ չեմ, երբ ձեռքս եւ ոտքս կապել կաշկանդել են իմ ամուսինն ու ամուսնութիւնը:

ԳԵՈՐԳ. Նազելի տիկին, չէ որ մենք շատ անգամ այդ մասին խօսել ենք: Միթէ մինչև այժմ էլ մենք միմեանց համար օտար մնացինք և չհասկացանք մեր անելիքը... Ինչ կարող է անել պսակը կամ ամուսնութիւնը, երբ դու ազատութիւնն ու զիտութիւնը՝ քո մէջն ես կրում: Դու համոզուած ես որ դու գերի չես... Դու շատ լաւ գիտես լրացնել բնութեան պահանջը— պատկանել նորան, ում որ սիրում ես, և հէնց այդ իսկ է զազափարը մարդու ճշմարիտ զարգացողութեան:

ՄԱԳ. Երբ ես լսում եմ քեզ, սիրելի Գէորգ, ես հանգստանում եմ ու համոզվում քո խօսքերից. իսկ երբ ուրիշներին եմ լսում, ես մոլորում եմ և տատանում... Չէ որ ես կին եմ, թէև զարգացած բաց թող արարած:

ԳԵՈՐԳ. Ասա խնդրեմ, ում խօսքերն են քեզ տատանում. քո բռնակալի. բաց գիտացիր, որ նա՛ այդ քո տէրը, քո օրինաւոր ամուսինը, իւր միակողմանի մասնագիտութիւնով ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Նորա հայեացքը պէտք է անպատճառ նեղ լինի... Նա ինչ կարող է հասկանալ սէր, ցանկութիւն, բուռն կիրք և այլն. նա չափշտակուած է իւր պարապմունքներով: Միշտ շրջապատուած լինելով հիւանդներով, որոնք կարօտ են նորա օգնութեան, նա մոռացել է մինչև անգամ իւր սեպհական անձը և գոռում է. Սիրեցէք մերձաւորին: Ասա խնդրեմ, չէ որ ամենից մօտիկն ինձ, ես ինքս եմ: Վերջապէս

մարդու ամենամօտիկը իւր սիրուհին է: Նա եթէ քեզ սիրելիս լինի, միթէ ամբողջ օրեր վազ կրտաց հիւանդների ետևից, թողնելով իւր հրեշտականման կինը մենակ և անմխիթար:

ՄԱԳ. Այո, այդ ճշմարիտ է, որ նա ինձ չէ հասկանում, ինչպէս շատ անգամ էլ խօսել ենք քեզ հետ այդ մասին: Նա բոլորովին օտար մնաց իմ բարձր գաղափարներին ու ձգտումներին:

ԳԵՈՐԳ. Եւ չաւիտեան էլ այդպէս կըլինի. նա իբրև բժիշկ, կենսական պիտույքներին մեծ նշանակութիւն է տալիս. նա կնոջ մէջ տեսնում է՝ տնտեսուհի, հաշուապահ, լուացարար և էլ ուրիշ ոչինչ: Նա կնոջ մէջ տեսնում է ֆիզիքական ոյժ, որի վրայ պատրաստ է հակներով բեռը բարձել. նորան անմատչելի է այն բարձր հրապոյրը, որ այժմեան զարգացած կուլտուրնի մարդը իւր տարփածուին դնում է սրբութիւն սրբոցի տեղ, վսեմ պատուանդանի վրայ ու հրճուանով պաշտում, գրկում ու համբուլում...

Ինչը ես նշան է անում:

ՄԱԳ. (Գլխաւոր:) Ո՛հ, սիրելի Գէորգ, քո խօսքերը կարծես թէ ինձ թեւեր են տալիս և ես կտրատելով ամուսնութեան ատելի շղթաները, թռչում եմ, բարձրանում...

ԳԵՈՐԳ (Համբոյրը իրենցով:) Ո՛հ, տենչալիդ իմ, ես երջանիկ եմ այս վայրկեանին... (Գլխաւոր է նայելու) Եթէ ինչպէս իմ ճակատագիրն ազատեց ինձ իմ հօրից, նույնպէս էլ քոնը գլխար վրագ և դու ազատուէիր ամուսնուցդ, այո, այն ժամանակ մենք կըլինէինք ամենաերջանիկը...

ՄԱԳ. Այո, այն ժամանակ ամենայն ինչ կատարեալ կըլինէր... Երևակայիր քեզ, սիրելի Գէորգ, սորանից մի քանի ժամ առաջ մարդս ինձ իւր մօտ կանչեց և պահանջեց, որ ես պատրաստուեմ հօրանցս գնալու, պատճառ բերելով, որ իբր թէ այստեղ ինձ համար տխուր է, այնինչ այնտեղ ճնողաց քնքուշ հոգատարութիւնը, երեխանց անմեղ սէրը կըհանգստացնեն և տրամադրութիւնս դէպի լաւը կըփոխեն: Մանաւանդ որ երեք տարի է չես տեսել եղբայրներիդ ու քոյրերիդ, աւելացրեց նա...

ԳԷՈՐԳ. Ա՛յ քեզ բան, հէնց որ միմեանց հասկացանք և պիտի երջանկութիւն վայելենք... մ. զ կամենում է անջատել... Ո՛չ, այդ անկարելի է... (Գրեմ է): Յետոյ միթէ դու համաձայնեցիր:

ՄԱԳ. Լսիր. ասում եմ, շնորհակալ եմ, զեռ ևս ճնողներին չեմ կարօտել. ես քեզանից պահանջում եմ ինձ ուղարկել Եւրոպա, իսկ դու կամենում ես աւելի խոր տեղեր աքսորել, որտեղից ես հազիւ եմ ազատուել...

ԳԷՈՐԳ. (Ընդհարմար): Ես միշտ այն կարծիքն ունէի, որ նա բռնակալ է. Յետոյ:

ՄԱԳ. Նա ինձ պատասխանում է.— Ինչո՞ւ չես ցանկանում գնալ. չէ՞ որ քո պապական քաղաքն է, այնտեղ քեզ բոլորն էլ ճանաչում են ու յարգում. վերջապէս մանկութիւնդ այնտեղ ես անցկացել, դու տեսնելով հին չիշատակները, իցէ թէ նորից զարթնեն քո մէջ անմեղ հասակիդ բարի մտքերը:

ԳԷՈՐԳ. Մի տես թէ կնոջն աքսորելու համար ինչպիսի իմաստակութիւններ է անում:

ՄԱԳ. Ես պատասխանեցի. ի գուր ես գլխիդ

զօռ տալիս, ես գնացողը չեմ, երբ այստեղ էլ ինձ համար նեղ է. վերջապէս նա շեշտում է.— Խօսելն աւելորդ է, դու պէտք է անպատճառ գնաս, ճանապարհի պատրաստութիւն տես: Ես հեռագիր եմ տուել հօրդ, որ գայ քեզ տանի... (Գրեմ է անհարմար): Վերջապէս համբերութիւնս կտրուեց, բերանս բաց արի և՛ զորս դու պատուիրեցեր խիստ լաւերն ասի, և ուզեցայ դուրս գալ, բայց նա իսկոյն տեղից վեր թռաւ, կուռս բռնեց ու գօռով նստացրեց և բարկացած շարունակեց.— Ուրեմն եթէ դու ինձ չես հասկանում, պարզն ասեմ. Գէորգի վատ ներգործութիւնը քեզ վրայ և քո յափշտակութիւնը նորա ցնդաբանութիւններով ու ծակ փիլիսոփայութիւններով դարձել է հէքեաթ ժողովրդի բերանում: Դու պէտք է հեռանաս այս քաղաքից գոնէ առժամանակ, որ մեր պատիւը վերականգնի:

ԳԷՈՐԳ. (Տեղից վեր ընկնելով): Օ՛, ես էլ գիտեմ իմ պատիւս պաշտպանել, ես վրէժխնդիր կըլինիմ այդ անգութ բռնակալից... Ես մենամարտութեան կըհրաւիրեմ:

ՄԱԳ. Ի՛հ, սիրելի Գէորգ, հանգստացիր. դու թէև կնոջ գրաւելում քաջ ես, ինչպէս մի սպայ, բայց արիւննարբութիւնը յատուկ չէ քեզպէս մի գիտնականի:

ԳԷՈՐԳ. Բայց նորան անպատիժ թողնել անկարելի է:

ՄԱԳ. Նա արդէն սաստիկ պատժուած է. նախ՛ որ նորա կինը հրապուրուած էջքեզանից... (Նայում է անհարմար): Երկրորդ՝ նա բաւականին ծանր հիւանդ



է և... ո՛վ գիտէ ի՞նչ կարող է պատահել:

ԳԵՈՐԳ. Է՛հ, ի՞նչ կարող է պատահել այնպէս առողջ մարդուն:

ՄԱԳ. Գիշերս բաւականին ցուրտ էր, նորան տարան հիւանդի մօտ, երևի մրսել է, տաքութիւն ունի... Ո՛վ գիտէ՝ կարող է հարինք, թոքերի բորբոքումն կամ թէ այլ ծանր հիւանդութիւն առաջ գալ: Նա ինքն է իւր համար գեղեր պատրաստում. իսկ նորա սեղանի վրայ լիքն են զանազան զօրեղ թոշներ, շատ հեշտութեամբ կարող է սխալուել՝ մին միւսի տեղ ընդունելով:

ԳԵՈՐԳ. Այդ շատ հաւանական է... Ես ևս չէի սպասում, բայց զթառատ ճակատագիրն ազատեց ինձ իմ հօրից...

Դրոնց չոյն է լուրս.— Խանութ աղջիկ-պարոն:

ՄԱԳ. Մտէք:

Մտնում է աղջիկը:

ԱՂԱԽ. Տիկին, շուտ եկէք, պարոնի հիւանդութիւնը չանկարձ սաստկացաւ, ձեզ կանչում է:

ՄԱԳ. Ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

ԱՂԱԽ. Էլ ի՞նչ պէտք է, մեռնում է...

ԳԵՐԳԷՆ ռ Մտերողինն դուրս գնալով նայում են ճիճեանց և ի որհրդաոր չերդով ծղրում:

ՏԵՍԻԼ Բ

ԱՂԱԽԻՆ, ԳԵՆԱ:

Ահա, այստեղ էլի մենակ, միասին... Սա էլ կնիկ է էլի... Ափսոս այն մարդուն, որ սրա ամուսինն է: Ամուսինը հիւանդ մեռնում է, իսկ սա մութ տեղեր է որոնում, որ սէր վայելէ... Ամօթ, ամօթ... Հարամ է սրանց կերած կաթը, պիղծ է սրանց արիւնը... Ո՛վ գիտէ՝ ուրախ էլ կըլինին, որ նա մեռնի... Ափսոս, ափսոս մարդ...

Շրտող դուրս է գնում:

ՎԱՐՍԿՈՅԻ

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Սենեակ-կարինէտ:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ, Տենուի, հիւսնդ և լոյս, նոսր Բոլո-  
ւոսի վրայ:

Այս մի հրաշք էր, որ ես ազատուեցի քինաքինի  
փոխանակ ստրիխնին ընդունելուց յետոյ... Ո՛հ, ինչ  
տանջանքներ էր, որ ես կրեցի: Այժմս էլ բոլոր մկա-  
նունքներս լարվում են և կարծես թէ չանգալով  
քաշելիս լինին մտերս, կռաջիլներս, առհասարակ ամ-  
բողջ մարմինս... Անդադար չետ են քաշվում մէջքիս  
և ճոճրակիս մկանունքները, վիզս այնպէս սեղմվում  
է, որ կարծես օղ են գցել և անողորմաբար հուփ  
տալիս, որ խեղդեն... Ի հարկէ անողորմաբար է,  
երբ սեպհական կինս և վաղեմի ընկերս իմ մահն են  
փափագում, որ գերեզմանիս վրայ հիմնեն իրանց սա-  
տանայական խնճոցքը:

Մոնուս է Մոգոգոյնէն:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱԳԻՍՏՂԻՆԷ, ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՄԱԳ. Ի՛նչ է պատահել քեզ, սիրելի Յովհան-  
նէս. փառք Աստուծու որ կենդանի ես: Ո՛հ, ինչպէս  
ինձ վախացրեց այդ մեր չիմար աղախինը...

Ձեռքը կանուխ է շոտոյն քնել, Բայց Յովհաննէսը չէ լողնում:

ՅՈՎՀ. Նստի՛ր, նստի՛ր, խնդրեմ, դու մենակ ես:

ՄԱԳ. Ո՛չ, մեր Գէորգն էլ ինձ հետ է:

Մոնուս է Գեորգը:

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ. Պատիւ ունիմ: (Գլուխ է քոյնու) Ի՛նչ-  
պէս է առողջութիւնդ իմ վաղեմի և մտերիմ ընկեր:

Կանուխ է չեռն առնել:

ՅՈՎՀ. (Ձեռք յեք քոյնու) Ո՛չ, ո՛չ, խնդրեմ.  
միայն դուռը կողպէ՛ք: (Գեորգը կողոսմ է դուռը) Բա-  
նալիքը բերէ՛ք այստեղ:

Անուս է Բոնոյնը և ծոցի վրայն դնում: Գեորգն ա Մոգ-  
ոգոյնէն նայում են այլոյնա՛ծ:

ՄԱԳ. Ի՛նչ կարիք կար դուռը կողպելու:

ՅՈՎՀ. Մի փոքր համբերութիւն, կ'իմանաք...  
(Գեորգն) Պ. Գէորգ, մենք շատ տարիներ է բա-  
րեկամ ենք և այնքան մօտիկ, որ շատ անգամ  
դրել ես քո գլուխն իմ կրծքիս վրայ և լաց եղել...  
Ես քեզ մխիթարել եմ և սփոփել քո ցաւերը: Ըստ

ժամանակ դու վշտացած հօրիցդ կամ օտարից ընկել ես իմ գիրկը և հեկեկալով ասել.—Ո՛հ, ես դեռ ևս շատ երջանիկ եմ, որ քեզպէս ընկեր ունիմ, դու բոլորովին փոխարինում ես եղբօրս...

**ԳԷՈՐԳ.** Ես միշտ ասել եմ և էլի կրկկայեմ, որ այդ ճշմարիտ իրողութիւն է...

**ՅՈՎՅ.** Իսկ դու, իմ կին, երկու տարի յետեւիցս ընկած սէր էիր կրկնում և երկվում: Ես պսակից յետոյ ամեն միջոց գործ դրի, որ քեզ տամ ընտանեկան հանգստութիւն և երջանկութիւն. բայց տարաբաղաբար կամ ես անկարող եղայ, կամ դու անընդունակ գտնուեցար... Վկայ է Աստուած, որ ես քեզ միշտ սիրել եմ:

**ՄԱԳ.** Բայց ի՞նչ կընշանակէ այս բոլոր խօսակցութիւնը, որ մեզ համար շատ հին բան է... Եթէ ճշմարիտ դու դժուար հիւանդ ես...

**ՅՈՎՅ.** (Ընդհարմար) Այո՛, այո՛, թողնենք այս մաշտած հնութիւնները, խօսենք նորութիւնների վրայ... Որովհետեւ ես սաստիկ հիւանդ եմ և ձեզ երկուսիդ ճանաչել եմ մինչև այժմ իմ բարեկամ, կրկամենայի իմ կտակս ձեզ յայտնել:

**ՄԱԳ.** Ի՞նչ կարիք կայ խօսել կտակի կամ մահի վրայ... (Յոգնուած և հարմար) երբ դու այդպէս առողջ ես:

**ԳԷՈՐԳ.** Յովհաննէս, դու միշտ քաջ ես եղել օտար հիւանդի անկողնի մօտ, իսկ ինքդ այժմ մի փոքր տաքութիւնից այդպէս վհատուել ես: Տես ինչպէս շուտով երևաց քո եսականութիւնը, երբ անձդ վշտացաւ:

**ՅՈՎՅ.** Այո՛, մարմնական վիշտը յառաջ է բերում հոգեկան տանջանք. իսկ այդ երկուսը միասին

թոյլ բնաւորութիւններին հասցնում են մեղապարտութեան:

**ՄԱԳ.** (Դողդոջեան շայտով) Ասա՛, ասա՛, խնդրում եմ, ինձ մի տանջիր... Ի՞նչ է պատահել քեզ:

**ՅՈՎՅ.** Առանձին ոչինչ, թունաւորուած եմ...

**ԳԷՈՐԳ.** Մտաւոր ինչն վեր էն լուսամտից և դէտարէն ընկնում:

**ՄԱԳ.** Եւ այդպէս հանգիստ նստած խօսում էս...

**ԳԷՈՐԳ.** (Շփոթուած, գնում է դէպի դուռը, ինչից հետո) Պէտք է այստեղից գլուխս ռադ անեմ... (Տեսնում է դուռը հարմար) Հա՛, տուր բանալին, գնամ օգնութիւն կանչեմ:

**ՄԱԳ.** Այո՛, այո՛, շուտ արա բանալին տուր, գնանք որոնենք, քաղաքիս ամեն ծայրից մի տասը մարդ բերենք, որ իցէ թէ կարողանանք քեզ մահից ազատել:

**ՅՈՎՅ.** (Անարարէրութեամբ) Խնդրեմ, հանգիստ ձեր տեղները նստեցէք. ձեր շարժողութիւնն ու խօսելը աւելացնում են իմ տանջանքը... (Նստում է) Ի՞նչ փոյթ եթէ մեռնիմ էլ, չէ՞ որ ինձ մօտ են իմ բարեկամներս... Ձրջապատուած քնքուշ կնոջով և հաւատարիմ ընկերով մեռնիլն աւելի հանգիստ կըլինի:

**ԳԷՈՐԳ.** (Ինչից հետո) Ո՛հ, ինչ տաժանելի դրութիւն է... Եթէ սա չանկարծ մեռնի, ես տեղն ու տեղը հոգիս կըտամ:

**ՄԱԳ.** (Մտաւոր) Ա՛յ պատիժ... Ես պէտք է տեսնեմ իմ ձեռքի գործը... Ես ի՞նչպէս հանեմ բանալին դիակի գրպանից:

**ԳԷՈՐԳ.** Յովհաննէս, խնդրեմ բանալին տաս:

Վերջապէս ինձ հարկաւոր է դուրս գնալ, շունչս կտրվում է այս դեղերով լիքը փակած սենեակում...  
Ինձ հարկաւոր է ազատ օդ:

ՄԱԳ. Գոնէ պատուհանները բաց անեմ, տեսնում ես Գէորդը խեղդվում է:

*Յրէտան էլ դիմում են դեղի պարուհունը:*

ԳԵՈՐԳ. (Մէյրանի:) Այս լաւ միտս բերեց. ներքնայարկն է, պատուհանից կարելի է վաչր թուջել: (Բարչո:) Այո, գոնէ պատուհանը պէտք է բաց արած:

ՅՈՎՀ. (Ուղղում է սարձանակը:) Ձեռք չտաք պատուհանին... Այստեղ նայեցէք, եկաւ գնդակը:

*Գէորդը սարսփով յեղ է դառնում եւ շարունակում:*

ՄԱԳ. Վերջապէս ինչու ես մեզ այսպէս տանջում... Դիցուք թէ մեռնում ես, միթէ դուներն ու պատուհանները պէտք է կողպած լինին:

ՅՈՎՀ. Այո, երբ մահը գալիս է անբնական կերպով, պէտք է կողպուած մեռնել, որ օտարի աչքին չերևայ եղեռնագործութիւնը:

ՄԱԳ. Ասա, խնդրեմ, հրքան ժամանակ է, որ ընդունել ես և ինչ թոյն է:

ՅՈՎՀ. Կարծեմ քեզ համար միևնոյն է... բաւական է որ թունաւորուած եմ:

ՄԱԳ. Ո՛չ, միևնոյն չէ, գիտենալու է թէ ինչ թոյն է և որքան ժամանակ է անցկացել:

ՅՈՎՀ. Աճմարիտ է. որովհետև թոյնների ներգործութիւնը դու առանձնապէս ուսումնասիրած ես, ուստի ես լրացնեմ քո հետաքրքրութիւնը. չորս ժամ է ինչ ընդունել եմ ստրիխնին...

ՄԱԳ. (Կեռք ծեփառելով) Եւ դու այդպէս ազատ նստած, կենդանի խօսում ես... Պարզ է որ դու մեռ-

նելու չես, արդէն ժամանակն անցել է: Ստրիխնին այնպէս թոյն չէ, որ քեզ միջոց տար այդպէս երկար ապրելու... Երեւի առաջն առել ես կամ քիչ ես ընդունել:

ՅՈՎՀ. Այո, հանգստացիր, ամեն միջոց գործ է դրուած:

ԳԵՈՐԳ. Ուրեմն տուր բանալին դուռը բաց անեմ:

ՅՈՎՀ. Ո՛չ, դեռ ևս ձեզ հետ գործ ունիմ:

ԳԵՈՐԳ. (Մէյրանի:) Ո՛հ, նահատակուեցի այս բարբարոսի ձեռքին... (Բարչո:) Ուրեմն շարունակիր:

ՅՈՎՀ. Միթէ իմ ազնիւ բարեկամներիցս ո՛չ մինը չի հետաքրքրվում, թէ այս ինչպէս պատահեց: ՄԱԳ. Այստեղ հետաքրքիր ոչինչ չկայ. կամ դու ես սխալուել և կամ դեղատուր...  
ՅՈՎՀ. Միթէ... Դու կարծում ես... (Հռնում է իջնոցը արդ, որի վրան գրած է «Ինտիմ») Սորա մէջն ինչ է... Մի լաւ նայիր:

ՄԱԳ. Ի հարկէ քինաքինա:

ՅՈՎՀ. Միթէ... Դու համոզուած ես... Ուրեմն ընդունիր մի փոքր քանակութիւն... Ձէ որ դու միշտ ընդունում ես. ասում էիր, որ մինչև անգամ պատրաստ ես աղի փոխարէն գործ ածել:

*Ածում է բաժակի մէջ սարսիխնի, խառնում եւ մէյրան:*

ՄԱԳ. (Ձեռով յեղ մէջուէ) Ո՛չ, ես այստեղ դեղ ընդունելու չեմ եկել, հիւանդը դու ես, քեզ է հարկաւոր... (Մէյրանի:) Աստուած իմ, ինչ տանջանք է:

ՅՈՎՀ. Գէորդ, իցէ թէ դու աւելի քաջ լինիս, դու ընդունիր. դու թուլակասո՞ւմ ես, հինգ ցորնաչափ քինաքինէն կը հանգստացնէ ջղերդ, կը կազդուրէ քեզ,

վերջապէս մարտոյութեանդ էլ օգուտ է: Այս դեղը մեր երկրում ո՛չ մի ժամանակ աւելորդ չէ:

**ՄԱԳ.** (Գեղորէին ոչ ու է անու՛մ որ շնորհունէ: ) Գէորգը բոլորովին աւուրջ է, դորան այժմ դեղ չէ հարկաւոր:

**ԳԷՈՐԳ.** Ների՛ր, ես արդէն այսօր երկու անգամ ընդունել եմ... շնորհակալ եմ հողատարութեանդ համար:

**ՅՈՎՀ.** Ուրեմն ո՛չ ոք ձեզանից չէ կամենում ընդունել... Եւ շատ էլ լաւ էք անում, այս շատ վտանգաւոր դեղ է... (Հանում է փոքր տետրակը, դեղափոսը, քեղծ փոքր բլիթներ, որի վրայ գրած է ոգրիկներն և նշարած հասան նշաններն՝ Արամայ գլուխը և ուրիշները: ) Տրիկին, անհատեարակը, որի վրայ դուք տոկուն աշխատանքով սովորել էք զեղատոմսեր գրել և ձեռքդ իմինիս նմանեցնել: Ահա այն զեղատոմսը, որ դեպատնից պահանջել էք ստրիխնին. անհա այն արկղիկը, որի մէջ ուղարկել են թոչնը: Ահա քո գրած տոմսակի և արկղիկի համարները, որ միևնոջն են: Ուրեմն ինչպէս այս արկղիկի միջի թուխաւոր դեղն ածուեց քինաքինայի հին արկղիկի մէջ... Բացատրի՛ր ինձ, նազելի տիկին... (Լուռ-Լիւռ: ) Վերջապէս այս ծանր և տաղտկալի խօսակցութիւնից չետոյ միթէ դու չես կամենում խոստովանուել, որ ես ամեն բան գիտեմ... Մինչև երբ դու պէտք է գիմակ ծածկես... Իմ դահիճը միայն դու ես, դու:

**ՄԱԳ.** (Կեղծ շարժ: ) Այ, տես, Գէորգ, վկայ եղիր, թէ քո գոված ընկերն ինչպէս է զրպարտում ինձ...

**ԳԷՈՐԳ.** Այո, ի դուր ես տիկնոջը ցաւացնում,

ինչպէս և ինձ, որովհետև մենք երկուսս էլ քեզ սիրում ենք:

**ՄԱԳ.** Այդ բոլորը կատարեալ զրպարտութիւն է, այդտեղ ստրիխնին հրտեղից պէտք է լինի, երբ վերան գրած է քինաքինա... Առանց քիմիական քննութեան դու իրաւունք չունիս ոչ ոքի զրպարտելու...

**ՅՈՎՀ.** Եթէ դու այդպէս համոզուած ես... (Էլն աւելացնում է բաժակի մէջ և խորանում: ) Ուրեմն երկուսդ ևս ընդունեցէք... Եթէ չէք կամենում առանձին առանձին, կէս արէք միասին, չէ՛ որ մտերիմ բարեկամ էք. այս կիանքի մի փոքր դառնութիւնն ի՛նչ նշանակութիւն ունի ձեր ապագայ ուրախ կեանքի համար:

**ՄԱԳ.** Մենք կարծեցինք որ դու հիւանդ ես, եկանք քեզ մխիթարելու, իսկ դու կատակ ես անում... Բանալին տուր, բաւական է:

**ԳԷՈՐԳ.** Ինձ մի ձանձրացնիր քո անտեղի կատակներով, վերջ տուր քո չանդգնութիւններին... Ես սովոր չեմ ազատութիւնն ճնշել... Բարեկամական համբերութեանն էլ վերջ կայ:

**ՅՈՎՀ.** Այո, համբերութեանս չափը լրացաւ... Ուրեմն վերջացրէք, բաւական է ինչքան կոտորուեցիք... Ես պահանջում եմ որ այս բաժակը միասին խմէք, և դուք պէտք է խմէք... (Սէ չեւորէ շարժ, Ինչ մէկ շեւորում արձանուելը: ) Ընտրեցէք՝ թո՛չն թէ գնդակ:

**ՄԱԳ.** Ո՛հ, Աստուած իմ, սա ցնորուել է:

**ԳԷՈՐԳ.** Բայց, Յովհաննէս, ինչո՛ւ, ինչո՛ւ ես մեզ այսպէս տանջում:

**ՅՈՎՀ.** Ո՛չ, ես ձեզ չեմ տանջում, ես միացնում եմ ձեզ այս զօրեղ իրերի տակ, որ ձեր զուգակից կե-

նակցութիւնը երջանիկ լինի... (Ուղում է Գեորգի վեր-  
ջինը) Ուրեմն վերջ տուէք այս տաժանելի վայր-  
կեաններին — ընդունեցէք մինը կամ միւսը:

Մէջէսում արքայանիւն ուղղած, մէկս չեմքին լռելը. այդ միջո-  
ցին երկուսն էլ յանկարծ շուտով են եւ չեմքները պարզում:

ԳԵՈՐԳ. Ո՛հ, ի սէր մեր ընկերութեան, ի սէր  
մեր երկարատև բարեկամութեան, խնայեցէք իմ  
կեանքը... Չէ՞ որ ես դեռ նոր եմ սկսում ապրել...  
հազիւ արժանացայ ժառանգութեան:

ՄԱՂ. Ո՛հ, Յովհաննէս, չէ՞ որ դու գլխաւատ  
ես, դու միշտ բարի ես, յանուն մեր սիրոյ թող որ  
ապրեմ...

ՅՈՎՀ. (Սեղանի վրայ է դնում արքայանիւն ու լռելը)

Ապրեցէք, ապրեցէք, դուք արժանի չէք մահի. դուք  
պէտք է դեռ ես ապրիք, որ տանջուիք... Ձեզ ժա-  
մանակ է հարկաւոր ձեր մեղքերը բաւելու համար:  
Նեռացէք այստեղից, բաւական է ինչքան ապականե-  
ցիք օդը: (Բանալին հանում է Գեորգից եւ դուրս գալով շարժում):  
Դ՞ուրս, դ՞ուրս զնացէք, թող նախախնամութիւնը  
լինի ձեր դատաւորը:

Գեորգին ինչոյն վէր է ինձում, վէր ասեմով բանալին, դուրս է գա-  
նում ու շատով դուրս գնում, Մտէրագինէն հեղեղում է  
նորան:

ՏԵՍԻՆ Դ

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԳԵՈՐԳ:

Ո՛հ, ահա, ահա գարգացողութիւն, ահա ա-  
մուսնական և բարեմակաման սէր... Աստուած իմ, Աս-  
տուած իմ... Այս կարճ միջոցում, այսքան փորձանք  
և տանջանք ամենամօտիկ մարդանցից... Թու-  
նաւորուել, զրկուել ընտանիքից և բարեկամից... Ո՛հ,  
ինչքան ստութիւն, ինչքան լրբութիւն... Եւ ես  
անմեղ երեխայի նման նոցա հաւատում էի... Ահա  
թէ ուր տարաւ ինձ իմ սէրը դէպի այդ հրէշները  
և իմ ներողամտութիւնը դէպի դոցա ցնդաբանու-  
թիւնները:

ՎԱՐՄԳՈՅՐ

# ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Գէորգի կոչարանի՝ յարմարաւոր  
կահաւորուած մի սենեակը:

ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳԵՈՐԳ, մէնչ, հաւ Կալով:

Ահա կըլրանայ շուտով երեք տարին, որ ես ըն-  
տանեկան կեանք եմ վայելու մ, բայց այնպէս եմ ձանձ-  
րացել, որ կարծես եօթանասուն տարի լինի անցած...  
Այն, անսպասելի կերպով երկար ժամանակ պատուե-  
ցինք զուգակցութիւնը... Տարաբաղդաբար այդ կինը  
չէ հասկանում ոչ մի խօսք... Տէնց մի նկատողութիւն,  
կամ մի թեթեւ ակնարկ իմ կողմից սիրոյ փոփոխու-  
թեան և անհաստատութեան մասին, իսկոյն կամ  
վզովս է ընկնում համբոյրներ տալիս, կամ լաց լինում  
և կամ որ ամենաձանձրալին է, երկուսն էլ միա-  
սին է կատարում: Երբ մտածում եմ, թէ ինչ վտանգի  
մէջ էր կեանքս դորա պատճառով—մի կողմից թոյն,  
իսկ միւս կողմից գնդակ... ես ինքս արհամարհում եմ  
ինձ: Թէև ես հաստատ վճուել եմ ազատուել այս

թշուառութիւնից, բայց էլի շատ կարծիքաւոր է...  
(Լ-ա-բ-ն-ն) Տեսնենք ինչ լուր կրբերէ այդ կնոջ ա-  
մուսնուց այն թեթեամիտ Իսահակը... Իսկ մի կողմից  
էլ այն անիծեալ քրէական գործը ինձ միշտ տաղնապի  
մէջ է պահում... Ահա այս էլ ձեզ ազատ սիրոյ պտուղը:  
Մոռում է Մախրաթիւն:

ՏԵՍԻՆ Բ

ՄԱԳԻՆՆԵՆԷ, ԳԵՈՐԳ

ՄԱԳ. (Համբարտեմով Գեորգին) Բարի լոյս, սիրելի  
Գէորգ. առողջ ես:

ԳԵՈՐԳ. Է՛հ գործերով ծանրաբեռնուած եմ լի-  
նում ամբողջ օրը, սաստիկ չզգնում եմ:

ՄԱԳ. Բայց ինչ կարիք կայ այստեղ մնալ և  
չարչարուել. այն ինչ մենք վաղուց պէտք է Եւրոպա-  
յում լինէինք քո ասելով:

ԳԵՈՐԳ. Տարաբաղդաբար դեռ շատ ժամանակ  
կ'անցնի, մինչև մենք Եւրոպան կրտեսնենք:

ՄԱԳ. Ո՛հ, բայց չէ՞ որ դու ասում էիր հա-  
րուստ եմ, ազատ, շտապում եմ Եւրոպա, ամեն բան  
ուկնիմ, միայն դու ես պակաս իմ կեանքից:

ԳԵՈՐԳ. Դու քո գրաւիչ շարժումներով, շողո-  
քորթ լեզուով վառեցիր երեակայութիւնս, ինձ հրա-  
պուրեցիր... Ի՛նչ խօսք, որ մարդ այդպիսի լարուած  
դրութեան մէջ շատ բան կ'ասէ և կըխոստանայ,  
միթէ՞ դորա համար պիտի նախատել... Է՛հ, կանայք  
միշտ այդպէս են... Իսկոյն երեւում է քո մեծահոգու-  
թիւնն ու համեստութիւնը...

ՄԱԳ. Ո՛ր, սիրելի Գէորգ, գիտցիր, որ ես ամաչում եմ տանից դուրս գալ:

ԳԵՈՐԳ. Չգիտեմ այստեղ ինչ կալ ամաչելու. երբ դու արարելք օգուտ քաղեցիր քո բնութեան ձգտումներից... Անթիւ կանայք այդ միւսնոյն են անում, միայն ծածուկ... Իսկ դու ցոյց տալով քո զարգացողութիւնը, բարձրացրիր կանանց ազատութեան դրօշակը... Չէ որ այս էին քո խօսքերը մեր միանալու ժամանակ:

ՄԱԳ. Այո՛, երեք տարի է, որ ես վաչելում եմ այդ ազատութեան պտուղը գերութեան մէջ. բայց եւ այնպէս, երբ կարող եմ գնալ Եւրոպա...

ԳԵՈՐԳ (Վարպէտ:) Ես քանի անգամ ասել եմ որ դեռ եւս մեզ անկարելի է մտածել անգամ Եւրոպայի մասին... Բայց եթէ այդպէս ձանձրացել ես ինձ հետ ապրելուց, չէ որ ազատ ես, խորհուրդ կրտամ վերադառնալ հօրդ տունը:

ՄԱԳ. Միթէ... (Կռիւլ է անում:) Բայց ասա՛, խնդրեմ, ինչ երեսով ես կարող եմ գնալ ճնողացս մօտ... Դու կարծում ես նրանք կ'ընդունեն ինձ:

ԳԵՈՐԳ. Ինչո՞ւ չէ... դու միշտ ասում էիր որ նոքա քեզ շատ էին սիրում:

ՄԱԳ. Զարմանալի դատողութիւններ ես անում... Մի կին, որ թողել է իւր օրինաւոր ամուսնուն, տարիներով ապրում է սիրեկանի հետ, այլևս ինչ տեղկարող է ունենալ մի պատուաւոր ընտանիքի մէջ, թէկուզ հէնց այդ լինէր իւր ճնողաց տունը:

ԳԵՈՐԳ. Ապրելը ինձ մօտ ձանձրալի է, իսկ այժմս էլ դրամական միջոցներս մեզ չեն ներում գնալ Եւրոպա, ճնողացը մօտ՝ քս ասելով տեղ չունիս, ուրեմն քեզ

մնում է միայն վերադառնալ մարդու դ մօտ... Երբ միջոցներս կրներեն, ի հարկէ այն ժամանակ կ'երթանք Եւրոպա:

ՄԱԳ. Օ՛հ... և դու այդպէս շուտով փոխեցիր լեզուդ... Տարաբաղբաբար ինձ անկարելի է մարդուս մօտ վերադառնալ... (Տխուր:) Աճմարիտ է ասած, թէ «ինչ ունինք, չենք պահում, իսկ կորցնելուց յետոյ ողբում ենք»...

Լաց է չինում:

ԳԵՈՐԳ. Տիկին, այստեղ ամենևին լացի ոչինչ չկայ... Օրէնքը պարտաւորեցնում է մարդուն իւր կնոջը պահել և միասին ապրել... (Վեր է չենում:) Թող կանացի թուլութիւնը, արտասուքը ինձ չի շարժում, միայն աչքերիդ ես վնասում: Աւելի լաւ է գնալ տես ինչ են անում խոհանոցումը, նայիր մեր սեղանատան մաքրութեան վրայ... Կնոջ ձեռքերը կերակուրի և խմորի մէջ աւելի փափուկ են և քնքուշ... Լացը քեզ պէս ազատամիտ և հաստատակամ կնոջը սազ չի գալիս:

ՄԱԳ. Օ՛ր, անգնութ արարած, այժմ ճիճաղում ես ինձ վրայ... Դու չէիր որ դիւթեցիր ինձ, անմեղ թռչունիս, թունաւոր օձի նման... Իժի ճնունդ, դու վարակեցիր ինձ քո անբարոյականութիւնով, ցելսին հաւասարացրիր պատիւս ու բարի անունս և ինձ խաղալիք շինեցիր քո լկտի կամքին... Մզելով ինձանից իմ ոչժն ու խելքը, այժմ մի կեղտոտ ու անպէտք փալասի նման քո ժանտացած երեսից ցանկանում ես դէն շարտել...

ԳԵՈՐԳ. Է՛հ, նագելի տիկին, այդպիսի վեղեցիկ շրթունքներից ինչպիսի գօրեղ շանթեր ես արձակում... Ես դեռ եւս ուր էի, որ այդ քո քնքուշ մատ-



ներդ՝ քինաքինէն ստրիխնին փոխելով, ցանկանում էիր մարդուդ ի վերին Երուսաղէմ ուղարկել...

ՄԱԳ. Հէնց այդ հետեանք էր քո նելեսալ շնչառութեան, որով թունաւորեցիր ինձ... Այդ միտքը քեզանից ստացայ:

ԳԷՈՐԳ. Հապա որ դու, իմ անմեղ թոչնիկս, նորածին զաւակիդ քո սեպհական ձեռներով ոչնչացրիր:

ՄԱԳ. Ո՛հ, չարածնունդ հրէշ... ես միշտ քո օգնականն եմ եղել, քո մտքերի ցանկութեան կուրորէն կատարողը... Այդ բոլորը քո բուռն պահանջմունքներն էին: Դու վճռել ես օգնել և կատարել ամեն մի եղեռնագործութիւն ինձ հետ... Ո՛հ, մայր իմ, մայր... միթէ դու ինձ այս տանջանքի համար աշխարհ բերիր... (Լռութիւն): Ե՛լ անկարելի է համբերել, պէտք է վերջ տալ այս անտանելի դրութեանը:

ԳԷՈՐԳ. Այո՛, այո՛, ժամանակը լրացաւ. բաւական է ինձ քո սէրը... Այս երեք տարին տարտարոսի մէջ տանջուեցայ... Գնա՛, գնա՛, տիկին. մնաս բարեաւ, ազատիր ինձ, աղաչում եմ... Միթէ ես հարկադրուած պիտի լինիմ մազերիցդ քաշ տալով դուրս գցել տանիցս... (Մեղաբանք) Այսուհետեւ զգոյշ պէտք լինել սորանից:

Դուրս է գնում:

ՏԵՍԻԼ Գ

ՄԱԳԻԱՂԻՆԷ, Ֆենոն, փերո-լետա՛՛ք ուշերը շոքո՛ւ Կողմը յածելով:

Աւաղ, ո՛ւր գնացին, ո՛ւր անհետացան իմ քաղցր երազները... Այդ չար գազանը զրկեց ինձ ամեն բանից, և այժմ ձանձրանալով իւր խաղալիքից դուրս է գցում... Եւ երեւակաւում է, որ ինքն էլ կարող է այսուհետեւ ապրել... Յիմար թշուառական, եթէ ես պիտի կորչեմ, քեզ էլ հետս կըկորցնեն:

Մտնում է Գոյեռնէն:

ՏԵՍԻԼ Դ

ԳԱՅԻԱՆԷ, ՄԱԳԻԱՂԻՆԷ

ԳԱՅ. (Համբուրում է: ) Դու ինձ նորից յիշեցիր և նամակով կանչեցիր... Միթէ դու կարծում էիր թէ ես նեղացած եմ քեզանից. ամենևին ո՛չ, այլ միայն սիրտս ցաւում էր քեզ համար:

ՄԱԳ. Նստիր, նստիր, խնդրում եմ, դու ո՛չ միայն նեղանալու նաև բարկանալու իրաւունք ունիս, այլ և ծեծելու:

ԳԱՅ. Ի՛նչ է պատահել, վերջապէս երևի զղջում ես արածիդ համար:

ՄԱԳ. Ո՛չ, այդ ասել չեմ կարող, միայն ցաւում եմ, որ չարաչար սխալուեցի՝ այն մարդու մէջ, որի համար գոհեցի ամեն բան... Ահա՛ հէնց մի քիչ առաջ խօսում էինք. նա ձանձրացել է մեր կենակցութիւնից, պահանջում է բաժանուել...

ԳԱՅ. Իսկ դձև:

ՄԱԳ. Ասա, խնդրեմ, ես ի՞նչ կարող եմ անել:

ԳԱՅ. Բաց մի որևիցէ ելք պէտք է գտնել:

ՄԱԳ. Ի՞նչ ելք կայ. ճնողներին կամ չմարդուս մօտ վերադառնալն անհնար է: չեռանալ ու առանձին ապրելու համար միջոց չունիմ... (Յո՛ւրիս: ) Ինձ մնում է միայն գլուխս մահու տալ:

ԳԱՅ. Ի՞նչ ես ասում, սիրելի Մազդադինէ, Մեղք է աչգպիսի խօսքեր ասելը... Գնանք ապրիր մեզ մօտ, մինչև տեսնենք Աստուած ինչ կրտսօրինէ... Բաց միթէ հնար չկայ այդ հրէշին սանձելու:

ՄԱԳ. Չատ էլ կայ, բաց ո՞վ պէտք է սանձէ, երբ ճնողներս, ամուսինս ու ազգականներս թքել են և հեռացել ինձանից: Մինչև անգամ ծանօթներս՝ փողոցում պատահելիս, շուռ են տալիս երեսները... (Ընչո՞ւրիս: ) Մի հարցնող լինի թէ նոցա ի՞նչ եմ արել:

ԳԱՅ. Ի՞նչպէս ես ասում աչգ... Թէև այժմ քեզ նախատելու միտք չունիմ, բաց չէ՞ որ դու քո վարմունքով ոտնատակ տուիր հասարակութեան ամօթխածութիւնն ու բարոյականութիւնը... Ներիր, այժմ դորա վրայ խօսելու ժամանակ չէ... Կրկնում եմ, միթէ այդ հրէշը վրայ ո՞չ ոք բարոյական ներգործութիւն չունի... Ես էլ ի՞նչ եմ ասում. անբարոյական մարդու վրայ ի՞նչ բարոյական ներգործութիւն կարող է լինել... Ափսոս որ դորան շանսատակ անող չկայ:

ՄԱԳ. Գնանք իմ սենեակը:

Դուրս են գնում: Մտնում են Գեորգիս ու Իսահակը:

ՏԵՍԻԼ Ե

ԻՍԱՀԱԿ, ԳԷՈՐԳ

ԻՍԱՀ. Ուրեմն ասում ես որ արդէն ձանձրացել ես քո կազմած ինքնուրոյն ընտանեկան կեանքից... Բաց աշխատիր հաշտուել գրութեանդ հետ, թէ չէ ուրիշ ելք չկայ:

ԳԷՈՐԳ. Ես ինձ բռնաբարելու ցանկութիւն չունիմ... Միթէ ես ինձ պիտի կապեմ մի ինչ որ կնոջ հետ, որի ցանկութիւնն էր, փախչել իւր բռնակալից և գալ ինձ մօտ ապրել:

ԻՍԱՀ. Բաց կարձեմ դու նորան սիրում էիր:

ԳԷՈՐԳ. Պէտք է գիտենաս, որ առհասարակ ես՝ որպէս շատ զգայուն մարդ, միշտ կարող եմ սիրել և կըսիրեմ. բաց իմ սէրն այն չէ, ինչ որ դու կամ բանաստեղծներն են հասկանում:

ԻՍԱՀ. Չատ հետաքրքիր է քո սիրոյ պատկերը:

ԳԷՈՐԳ. Այդ շատ պարզ է. երբ ես տրամադրուած եմ, երբ այրվում եմ ցանկութիւնից և իմ ամբողջ ջղերիս մէջ կարծես ելեքտրական հոսանք լինի սահելիս, այն ժամանակն ես ինձ մոռանում եմ և չգիտեմ թէ ո՞ր և ո՞ւմ գիրկն է տանում ինձ հարբեցնող կիրքը:

ԻՍԱՀ. Եղբայր, դու կատարեալ Դօն-Ժուան ես եղել. բաց ի՞նչ եմ ասում... նորա մէջ գոնէ ձգտում կար գէպի սէրը, կար ճաշակ. իսկ դու ընկած տեղը պատրաստ ես օգտուել ամեն մի պտուղից:

ԳԷՈՐԳ. Այո, այդ կողմից իմ պահանջունքները շատ պարզ են... Եւ առհասարակ ինձ համամ

ճաշակ, գեղեցկութիւն, սրբութիւն, պարտաւորութիւն և այլն, այդ բոլորը վերացական, դատարկ խօսքեր են, որ զօղանջում են ականջիս:

ԻՍԱՀ. Ուրեմն ի՞նչ է քո գաղափարը կամ լաւ ևս ասել՝ քո հաւատոյ հանգանակը—profession de foi-ն, որին սիրում ես և պաշտում ..

ԳԷՈՐԳ. (Ձեռքով հարձակուի) Ահա իմ անձը իւր բոլոր զգացմունքներով և ցանկութիւններով, որին սիրում եմ անսահման և որին պաշտում եմ անպայման:

ԻՍԱՀ. Ո՛հ, ինչպէս կոշտ է քո «ես»-ը և ինչ պէս յետաշրջուած են քո բնութեան պահանջմունքները... Ի՞նչ վերադարձել ես վայրենի նախահօր պատկերին, ուրեմն ի վուր ես քո անասնական և գազանական բռն ձգտումներն աշխատում ծածկել եւրո պական լուսաւորութեան քողի տակ:

ԳԷՈՐԳ. Թող այդ քո անբաղադաքավ արի և անտեղի խօսքերը... Ի՞նչ, ինչպէս գործնական մարդ, մի վճռական խորհուրդ տուր, որ առանց աղմուկի, արտասուքի ու արիւնի կարողանաք բաժանուել:

ԻՍԱՀ. (Յոգեալ հարձակուի) Խեղճ Մագդաղինէ, ուր հասցրին քեզ քո ցնդաբանութիւնները... (Մոռած է) Բարեկամ, այդ շատ ծանր մտածելու խորհուրդ է:

ԳԷՈՐԳ. Զարմանալի է, որ դու շատ սիրում ես ամեն բան ծանրացնել:

ԻՍԱՀ. Ասա, լանդրեմ, մի՞թէ կարելի է թեթեւամտութիւնով նայել այդպիսի հարցին. շոգոթորթել մի պատուաւոր կնոջ, այն էլ իւր մտերիմ ընկերոջ ամուսնուն, գուարճանալ և յետոյ տանից դուրս գցել

իբրև մի գարշելի արարած... Մի՞թէ չես խղճում այդ ողորմելի կնոջը:

ԳԷՈՐԳ. Ա՛յ գարմանալի շեգրակացութիւններ... Առաջին՝ որ այդ կնոջը ո՛չ ոք գօռով իւր մօտ չի բերել. երկրորդ՝ եթէ մի որեւիցէ գուարճութիւն կար մեր միանալուց, երկուսիս համար էլ փոխարինաբար էր. երրորդ՝ հէնց նորան խղճալով, ես կամենում եմ, որ նա նորից գնայ իւր ընտանիքի գիրկը, որից ակամայ ես պատճառ եղայ անջատուելու... Նա ամբողջ օրը տխուր է և գանգատաւոր:

ԻՍԱՀ. Եղբայր, քո գազաթի մէջ մի տարօրինակ ծուռը քօռամելս է ցցուած, որ ամեն մի միտք բոլորովին առանձնապէս է դուրս գալիս, այսինքն՝ աչակերպուած, ներկուած սեպհական դոշներով... Քեզ հետ խօսելն ու հակաճառելը բոլորովին ապարդիւն և աննպատակ մի բան է:

ԳԷՈՐԳ. Քեզանից ես տրամաբանական ճառեր չեմ ուզում, այլ խորհուրդ:

ԻՍԱՀ. Կարձեմ աչտեղ իմ խորհուրդն աւելորդ է այլևս... Նա այժմ մի անտէր, անկարեկից կին է, ձեռքից բռնիր և դուրս արա ու դուռը կողպիր:

ԳԷՈՐԳ. Բաց այդ կարող է աղմուկ բարձրացնել և այդ իմ պատուիս կրդիպչի:

ԻՍԱՀ. Արդէն շատ ուշ է մտածելը քո անուան և պատուի վրայ, բանը բանից անցել է:

ԳԷՈՐԳ. Վերջապէս մի՞թէ մինչև այժմ դու չխօսեցիր նորա մարդու հետ, ինչպէս շատ անգամ ես քեզ խնդրել եմ... Ի՞նչ է ասում նա, մի՞թէ չետ չի ընդունելու իւր կնոջը:

ԻՍԱՀ. Այո, ես հէնց այժմ նորա մօտիցն եմ

դալիս, նա ինքը խօսք բացեց այդ մասին և ինձ յանձնեց որ քեզ հետ վճռողաբար խօսեմ: Նորան յայտնի է ձեր մէջ ծագած անբաւականութիւնները... Նորա կարծիքը շատ տարբեր է ձեր ցանկութիւնից:

ԳԻՈՐԳ. Ի՞նչպէս:

ԻՍԱՀ. Նա ասում է, քանի որ նոքա ամեն սրբութիւն, պարտականութիւն և իրաւունք ոտնակոխ արին և միացան անարդելք, ազատ կերպով, ուրեմն այդ բան զոհաբերութիւններից չետոյ՝ թէ մերձադորների և թէ հասարակութեան կողմից, նոցա միտջն մնում է որ մշտապէս ապրեն միասին:

ԳԻՈՐԳ. Բայց միթէ մտադիր է բռնութիւն գործ դնել մեզ վրայ... Եթէ ինքը իւր պսակուած կնոջից կարող էր բաժանուել, միթէ ես չեմ կարող թողնել իմ սիրեկանս:

ԻՍԱՀ. Յովհաննէսն ասում է, որ պսակի մէջը կայ սրբութիւն, վերջապէս կայ պայման... Պայմանը քանդելը ծանր է և շատ անգամ աններելի. բայց և այնպէս քանդել կարելի է այն, ինչ որ իսկապէս գոյութիւն ունի. իսկ ազատ միանալն այս հանգամանքում՝ չանուն անպայման սիրոյ պահանջում է միասին ապրել անբաժան, որ զոնէ դորանով ծածկեն ուրիշի պղծած ամուսնութիւնը և հանգստացնեն հասարակաց ամօթխածութիւնն ու բարոյականութիւնը:

ԳԻՈՐԳ. Բայց եթէ ձանձրացել են իրարից և միասին ապրելն անկարելի է:

ԻՍԱՀ. Այն ժամանակ նա զրկուածին պաշտպան դուրս կըգաց:

ԳԻՈՐԳ. Ա՛յ քեզ բան:

ԻՍԱՀ. Այո, Յովհաննէսն ասում է, եթէ տիկնոջը դու զրկես կամ հեռացնես, նա կըպատժէ քեզ, ո՛չ թէ նորա համար որ դու գողացար նորա ընտանեկան պատիւը, այլ որ այդ պատիւն ու սրբութիւնը քեզ խաղալիք շինելով պղծեցիր և դէն գցեցիր:

ԳԻՈՐԳ. Լաւ, ես գրաւեցի նորա կնոջը, զրկեցի նորան ընտանեկան երջանկութիւնից, նա դորա համար վրէժխնդիր չէ, իսկ ես, իմ սիրեկանից զղուած, երբ նորան դուրս եմ անում, նա այդ ժամանակ պաշտպան է հանդիսանում:

ԻՍԱՀ. Այո... Նա այն կարծիքն է յայտնում, որ եթէ մի աղբատ իմ հացս գողանայ և ցելսի մէջ գցի ու խոտի տակին տորթէ, ես նորան կըպատժեմ. բայց եթէ նա այդ հացով իւր քաղցը չազգեցնի, թէև ես իրաւունք ունիմ պատժելու, բայց և բարոյական հիմք կայ ներելու: Կարճ ասած, Յովհաննէսը քո խղճմտանքին է թողնում քո վարմունքը նորա հետ... 'Իու՛՛ որպէս նորա հին և մտերիմ ընկեր մտար նորա տունը, շողոքորթեցիր կնոջը, պղծեցիր նորա ընտանեկան սրբութիւնը... հիմա եթէ այդ կնոջն էլ զրկես, ո՛հ, այն ժամանակ նա պաշտպան կըհանդիսանայ նորան և քեզ չարաչար կըպատժէ:

ԳԻՈՐԳ. Ա՛յ քեզ խաթաբալա... (Մարտոն է:)  
Սիրելի Իսահակ, քո խօսքերիցն երևում է, որ Յովհաննէսը դեռ ևս սիրում է իւր կնոջը... Ազատիր ինձ աղաչում եմ, հաշտեցր՛ւ զոցա:

ԻՍԱՀ. Նա ասում է, որ այդ կնոջը այլևս չեմ սիրում ինչպէս ամուսին, այլ դորան կըպաշտպանեմ որպէս տղամարդ: Վերջապէս նա իւր խօսքերը կնքեց

այսպէս. «Նոյա զուգակցութիւնը դրած է յաւիտեան թոյնի  
եւ զնոյակի հովանաւորութեան տակ»:

Մոյնում էն Մադգալինէն և Գայիանէն:

### ՏԵՍԻՆ 2

ՆՐԱՆՔ, ԳԱՅԻԱՆԷ, ՄԱԳԴԱԳԻՆԷ, յետոյ ԱՂԱԽԻՆ

ԳԵՈՐԳ (Վէր է Էնում պէղծեց և չեռք որդի Գայիանէն):  
Ողջոյն, տիկին Գայիանէ, շատ ուրախ եմ որ դուք  
ինձ մօտ էք եկել:

ԳԱՅ. Ձեր ուրախութեան չափն ինձ յայտնի  
չէ, բայց իսկապէս ես տիկին Մագդաղինէին ցան-  
կացայ այցելել:

ԳԵՈՐԳ. Այդ միւսնոյն է, որովհետեւ նա էլ  
դեռ ևս ինձ մօտ է բնակվում:

ԳԱՅ. Երևի կամենում էք ասել միասին էք  
ասլրում:

ԳԵՈՐԳ. Տիկին, ճշմարիտ է միասին ենք ապ-  
րում, բայց անպայման և ազատ, այնպէս որ ամեն  
մի վայրկեան կարող ենք դուրս թուչի աջ ու ձախ:

ԳԱՅ. Ազատ թուչելու համար հարկաւոր են ա-  
զատ թեքեր...

ԳԵՈՐԳ. Այո, հէնց դորանում է մեր ազատու-  
թիւնը, որ ճնշուած չենք եկեղեցական կամ քաղա-  
քական պայմաններով

ԳԱՅ. Մոռանում էք բարոյական կապը՝ սէրը,  
պարտականութիւնը և յարգանքը դէպի ուրիշներ  
իրաւունքը...

ԳԵՈՐԳ. Տիկին, առաջ էլ ձեզ հետ շատ ան-

գամ ենք խօսել այդ հարցերի մասին և դուք լաւ  
գիտէք, որ միշտ էլ ես ինձ ազատ եմ համարել որևէ  
պարտականութիւնից:

ԳԱՅ. Բայց չէ որ ուրիշներն էլ ազատ են ի-  
րանց գործերի մէջ: Օրինակի համար դուք մէկին  
անբարոյականացնում էք, չէ որ կամ այդ անձն ինքը  
և կամ նորա մերձաւորները պէտք է նորան պաշտ-  
պանեն ձեր երևակայած ազատութեան դէմ...

ԳԵՈՐԳ. Բայց իմ և ձեր ազատութեան մէջ  
մեծ զանազանութիւն կայ. իմը հիմնուած է բնու-  
թեան պահանջմունքների վրայ, իսկ ձերը բռնաբա-  
րութեան:

ԻՍԱ. Բայց չէ որ բնութեան մէջն էլ կան  
լաւն ու վատը... Վատ ձգտումները մէկին տանում  
են դէպի յանցանք և կախաղան, իսկ միւսին՝ դէպի  
նահատակութիւն մարդկութեան համար...

ԳԵՈՐԳ. Ես այդ կ'ընդունէի, եթէ մէջտեղը  
կրթութիւն և զարգացողութիւն չլինէր, որոնք բնու-  
թեան պահանջմունքներին տալիս են միտք և որոշ  
նպատակ, այսպէս ասած՝ զգացմունքները նրբացնում  
են...

ԳԱՅ. Այդ չէ կարելի ընդունել անպայման...  
Հէնց այսօր իմ խեղճ կանարեան թռչնիկս զոհ գնաց  
տանը մեծացրած և կրթուած կատուի նրբացած  
ճանկերին...

ԻՍԱ. (Մեջմտեւով) Ուրեմն զազանը մնում է  
զազան... Եւ ճշմարիտ է ասում ժողովրդական առածը.  
«Ինչքան դայի զլիւն աւտարան կարդաս, նա կ'ասէ՝  
շուտ արէք, ոչխարը սարն անց կացաւ»... Հէնց այդ հի-  
ման վրայ աւելորդ է մեր խօսակցութիւնը:

**ՄԱԳ.** (Որ նստած էր լուսու, յանդարձ սևափուռայով) Ընդհակառակը հէնց իսկ ժամանակն է դորա վրայ խօսելու... **Պ.** Իսահակ, կարճեմ Գէորգը խօսած կըլինի ձեզ հետ մեր անել դրութեան մասին:

**ԻՍԱՀ.** Այո, տիկին, ես թէև շատ եմ մտածել այդ մասին, բայց համարեա մի ելք չեմ գտնում... Դուք պարտաւորուած էք հաշտուել ու ապրել միասին:

**ՄԱԳ.** Ձեր ասելուց այնպէս է երևում, որ էլի մի միջոց գիտէք. ուրեմն ասացէ՛ք, աղաչում եմ...

**ԻՍԱՀ.** Մի հնար կայ, բայց շատ ծանր է և դժուար, այն է, որ դուք միմեանց հետ պսակուիք:

**Գէորգն ու Մատթարդինն զարմանով նայում են միմեանց:**

**ԳԷՈՐԳ.** (Ինչպիսիք:) Ինձ անտանելի է նաև այս ազատ դրութիւնը... (Բարչը:) Ձեզ լաւ չաչտնի է իմ դաղափարն ու կարծիքը պսակի մասին. .

**ՄԱԳ.** Մենք այս դրութեան մէջ անգամ անկարող եղանք միասին ապրել, ուրեմն ինչպէս կարող է մեզ կապել պսակը... Ընդհակառակն՝ աւելի տարօրինակ և անել դրութեան մէջ կ'ընկնենք:

**ԳԷՈՐԳ.** Այդ քո ասածը երևի միայն մի անտեղի սրամտութիւն էր:

**ԳՍՅ.** Սպասեցէ՛ք, թողէ՛ք պ. Իսահակը բացատրէ իւր միտքը...

**ԻՍԱՀ.** Հարցը շատ պարզ է... (Գէորգին:) Դուք կամենում էք բաժանուել՝ ի հարկէ առանց անբաւականութեան և միևնույն ժամանակ ամեն մէկը ձեզանից ցանկանում է պահել իւր ազատութիւնը... Ներկայ դրութեան մէջ բաժանուելով՝ տիկինը զուրկ է մնում իւր մարդկային իրաւունքներից, առանց անունի, առանց բարեկամի և հովանաւորութեան,

առանց մի որևիցէ դրամական միջոցի, արհամարհուած հասարակութիւնից, մինչև անգամ մի անցաթուղթ չունի, որ ոստիկանութեանը ներկայացնէ:

**ԳԷՈՐԳ.** Այդ բոլորը կարելի է և գուտ ճշմարտութիւն է, բայց ինձ ինչ. ես ինչո՞ւ պէտք է պսակով կապեմ իմ ազատութիւնս դեռ ևս երիտասարդ հասակումս... Ո՛վ գիտէ ինչ կըպատահի ինձ և ո՞ւմ կը հանդիպեմ... Իսկ ինչ կըվերաբերի դրամական միջոցին և անցաթղթին, այդ կարող է ստանալ հօրից կամ ամուսնուց, որոնք այժմ ինձանից հարուստ են... Ես էլ պատրաստ եմ օգնելու... Ահա երկու տարի է դորա բոլոր ծախսերը միթէ ես չեմ հոգում:

**ԻՍԱՀ.** (Գէորգին:) Իսկ պսակն այն օգուտն ունի քեզ համար, որ դու այս անախորժ և անել դրութիւնից մի անգամից կ'ազատուես. անցաթուղթ կըտաս տիկնոջը, կ'որոշես մի որևիցէ թոշակ քո պատուին արժանի... Տիկինը կըհեռանայ և կ'ապրի անկախ, ուր էլ կամենայ... Դորանով դու փոքր ի շատէ կըբաւես մեղքերդ գոնէ տիկնոջ վերաբերութեամբ:

**ԳԷՈՐԳ.** Եթէ միայն պսակով պէտք է հանգստանայ և ազատուի, նա արդէն ունի այդ...

**ԻՍԱՀ.** (Տարացած:) Դու ինձ հարկադրում ես մի բանը տան անգամ կրկնել... Այո, պսակուած է, բայց անպատուած քեզանից, քո պարտականութիւնն է ուրեմն վերականգնել դորա պատիւը... Այն կեղտը որ դու քսեցիր ուրիշի պսակի վրայ, դու քո պսակով պէտք է մաքրես... Այս են պահանջում դորա և քո շահերը, հասարակաց խիղճն ու ամօթխածութիւնը, որին ոտնատակ տուիր...

**ԳԻՈՐԳ.** Այդ քո ճարտար լեզուն՝ աւելի լաւ կ'անես չոզնեցնես, շատ քիչ է շարժում ինձ. ես իմ համոզմունքս չեմ փոխիլ ո՛չ մի բանի հետ:

**ԻՍԱՀ.** Այո՛, քո յամառութեան խօսք չկայ. ես իսկապէս տիկնոջ հարցին էի պատասխանում: Բայց աւելորդ չեմ համարում նորից քեզ չիշեցնել Յովհաննէսի խօսքերը դորա պաշտպանութեան մասին...

**ՄԱԳ.** Խեղճ իմ Յովհաննէս... էլի նա է ինձ խղճում ..

Լայ է շինում:

**ԳԱՅ.** Ես ունիմ Աստուածը, խելօք և ճշմարիտ խօսքեր են պ. Իսահակի ասածները...

**ԻՍԱՀ.** Է՛հ, բաւական է, պ. Գէորգը պէտք է որ համաձայնի, կեանքը թանգ բան է... Կամ պէտք է շարունակել այսպէս ապրել և կամ մեռնել, այլապէս Յովհաննէսը շանսատակ կ'անէ քեզ... Բաժանուելու հետեանքը շատ պարզ է:

**ԳԻՈՐԳ.** (Այլուրեւ) Ասենք թէ ես համաձայնեցի, բայց չէ որ տիկինը պսակուած է:

**ԻՍԱՀ.** Այդ այլ խնդիր է, որի մասին ուրիշ անգամ կրիստենք. այժմ ժամանակ է գնալու:

**ԱՂԱԽ.** (Շորապու մտնում է.) Ոստիկանն ուզում է ձեզ տեսնել:

Մտնում է ոստիկանը մի լուռի շեւիչ:

ՏԵՍԻՆԷ

ՆՐԱՆՔ, ՈՍՏԻԿԱՆ

**ՈՍՏԻԿԱՆ.** (Դիմելով Գէորգին) Ահա՛ պ. քննչի հրամանը, դուք և տ. Մազդարինէն պէտք է իսկոյն գաք ինձ հետ բանտը...

Նորա ոտքադրած վէր են շինում:

**ԳԱՅ.** Ահա՛, էլի մի նոր տարաբաղդութիւն... Երևի սոցամեղքերի հետեանքն է:

**ԻՍԱՀ.** Է՛հ, տիկին, սոցա ոչ թէ պատիժ և բանտ է հարկաւոր, այլ խնամք և հիւանդանոց. դուքա բարոյապէս ցնորուածներ են... Դուքա իրանց վատթար կեանքով ոտնատակ տուին հասարակաց ամօթխածութիւնն ու եկեղեցական սրբութիւնը, ուր շատ վաղուց հետէ հնչվում է դոցա դատավճիռը.

«Ձար մշակողին,

Ձար սերմանց նորին,


Ձորայն զպտուղ»:

Վ Ե Ր Զ

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եր.	Տ ու շ	Ս ր ու շ	Ու շ ի շ
7	2	ներ.	արգելուած է
12	3	վեր.	ցանձրացնել
"	3	ներ.	զվախենաք
16	1	"	խն...
18	11	"	հեւրերն
19	2	վեր.	որովհետև
"	7	ներ.	սկսում են
22	12	վեր.	արգանդը
29	4	"	իրողութիւն է
"	1	ներ.	ուզում է
31	8	վեր.	շնչառութիւն
33	11	"	հանգիստ
38	3	ներ.	մէջն է
40	15	"	մոլորում եմ
"	14	և 15	տատանում...
42	6	"	անցկացել,
51	13	"	լաւ
54	1	վեր.	Ուղտ է
58	4	վեր.	անարգելք
61	12	"	(Համբարում է:)
62	9	"	Մեղք է
71	11	"	երկու
72	11	"	Ես ունիմ





361

ՀՀ Ազգային գրադարան



NL0685887

333

ՀՀ Ազգային գրադարան



NL0685886

## ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻՒՍ ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

### Ռուսերէն.

1. Катарръ средняго уха у поворож-  
денныхъ и грудныхъ дѣтей 30 Կ.
2. Гигиеническіе эскивы г. Тифлиса. 25 "

### Հայերէն.

3. Վեներեան ախտեր. . . . . 20 "
4. Բանտերը և նոցա բնակիչները . . . 20 "

### ՀԱՌՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ՝

1. «Մխիթարյանց և Նանգիստ», չա-  
փարեցական գրուածքներ:
2. «Մեղապարտ փարիսեցիներ», պրա-  
մատիքական պատկերներ իմեց  
գործողութեամբ:

ԳԻՆՆ Է 30 Կ.